



Ու Ղ Ե Ց Ու Յ Ց

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության ներքո իրականացվող Միավորված Ազգերի Կազմակերպության Բնապահպանական Ծրագրի (ՄԱԿ ԲԾ) և Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>>



ԵՐԵՎԱՆ 2016թ.

Բովանդակություն

Ներածություն

1. Գյուղատնտեսական և պարենային բույսերի կենսաբազմազանության <<in-situ-on-farm>> պահպանությունը.

- 1.1 Կենսաբազմազանության պահպանությունը տարբեր մակարդակներում՝ էկոհամակարգի, միջտեսակային և գենետիկական (ներտեսակային)
- 1.2 Ագարակատերերի (ագարակապանների, ֆերմերների) ներգրավումը բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության ազգային համակարգի մեջ
- 1.3 Հոգուտ հասարակության և ագարակապանների համար:

2. Հայաստանի մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության օրենսդրական հիմունքները.

- 2.1 Հայաստանի մշակաբույսերի վայրի ցեղակիցների կառավարման ինստիտուցիոնալ համակարգ
- 2.2 Մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանությունը հատուկ պահպանվող տարածքներում
- 2.3 Բույսերի գենետիկական ռեսուրսների մատչելիություն
- 2.4 Մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության և օգտագործման բնագավառում շահագրգիռ կողմերի համառոտ նկարագիր
- 2.5 Մշակաբույսերի վայրի ցեղակիցների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և իրազեկության տեղեկացում:

3. Պահպանության ենթակա բույսերի ագրոկենսաբանական առանձնահատկությունները և դրանց կիրառման (օգտագործման) նպատակներն ու ձևերը.

- 3.1 Հացազգիներ
- 3.2 Ընդավորներ
- 3.3 Բանջարաբուստանայիններ
- 3.4 Պտղա-հատապտղային բույսեր:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է տնտեսապես մեծ կարևորություն ունեցող շատ բույսերի ծագման առաջավոր ասիական կենտրոնում: Հայաստանի բնական պաշարների կազմում մշակովի բույսերն իրենց կենսաբանական առանձնահատկություններով, մեր բնության ինքնատիպությունը հաստատող գործոններով և տնտեսության զարգացման տեսակետից ունեն ռազմավարական նշանակություն: Մեր երկրի բույսերի կենսաբազմազանությունն օգտագործվել է 6000 տարի շարունակ որպես սննդի, անասնակերի, դեղամիջոցի և մանրաթելի աղբյուր՝ իրենից ներկայացնելով մշակութային խիստ կարևորություն:



Հայաստանը փոքր տարածք զբաղեցնելով հանդերձ՝ համարվում է աշխարհի ագրոկենսաբազմազանության ամենակարևոր կենտրոններից մեկը. ունի գյուղատնտեսական բույսերի՝ հացաբույսերի, հատիկալնդավորների, կերայինների, պտղա-հատապտղայինների, բանջարաբուստանայինների, յուղատուների և դրանց ցեղակիցների մեծ բազմազանություն:

Մշակաբույսերի վայրի ցեղակիցներն (այսուհետ՝ ՄՎՅ) աբորիգեն ֆլորայի տեսակներ են, որոնք էվոլյուցիոն-գենետիկական տեսակետից մոտ են մշակաբույսերին և համարվում են մշակաբույսերում բացակայող կամ թույլ արտահայտված հատկանիշների ու հատկությունների դոնորներ: Այդ իսկ պատճառով անգնահատելի է ՄՎՅ-ների դերն ու նշանակությունը, քանի որ դրա պաշարների խելամիտ պահպանությունն ու կայուն օգտագործումը կարող է խթանել սննդի գլոբալ անվտանգության ապահովմանը, ինչպես նաև հիմք համդիսանալ գյուղատնտեսական արտադրության կատարելագործմանը, բերքատվության բարձրացմանը, աղքատության նվազեցմանը և շրջակա միջավայրի պահպանությանը:

Հայաստանում ՄՎՅ-ների պահպանությունն իրականացվել է և <<in-situ>> (պահպանվող տարածքի ներսում և դրսում), և <<ex-situ>> ճանապարհով (կենդանի հավաքածուներում և սերմերի ֆոնդերում): Ագրոկենսաբազմազանության համար կարևոր նշանակություն ունեցող տարածքներից մեկը <<Էրեբունի>> պետական արգելոցն է: Այս արգելոցը ստեղծվել է ՄՎՅ-ներում առկա գենետիկ բազմազանությունը պահպանելու համար՝ ցորենի երեք տեսակներն իրենց 100 ենթատեսակներով:

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի <<Բուսաբանության Ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի Բույսերի Կարգաբանության և Աշխարհագրության բաժնի հերբարիումի հավաքածուն ունի շուրջ 500.000 նմուշներ և բաժանվում է հետևյալ հիմնական մասերի՝

- Հայկական
- Համաշխարհային
- Դուպլիկատ նմուշներ:

Հիմնական և ամենաբազմազան մասը կազմում է հայկական հերբարիումը, որտեղ ներկայացված է Հայաստանի ամբողջական ֆլորան: Այն ներառում է մշակաբույսերի վայրի ցեղակիցներ, ինչպես նաև մշակաբույսերի վայրի և վայրիացված ձևեր:

Հանրապետությունում սերմերի հիմնական հավաքածուները կենտրոնացված են ՀՀ գյուղատնտեսության նախարարության գիտահետազոտական ինստիտուտներում, դրանք են՝ ցորենը, աշորան, գարին, այծակն, մի քանի տեսակ և մի քանի հացահատիկային բույսեր և բանջարաբուստանային բույսեր (ոսպ, երեքնուկ, առվույտ, սպանախ, գազար և բազուկ): Հավաքածուի ընդհանուր թիվը կազմում է 3450 տեսակ, որից 1027-ը ցորենի նմուշներ են:



ՀՀ գյուղատնտեսության <<Ագրոնոմիայի և բույսերի պահպանության գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ում առկա է ցորենների և հացահատիկային բույսերի <<ex-situ>> մեծ հավաքածու: Հաստատված սորտերի ընդհանուր թիվը ավելի քան 6800 է կազմում: Սերմերի հավաքածուի հիմնական մասը (մոտավորապես 5000) սելեկցիոն բազմազանությունն է, հեռանկարային ձևեր, ձմեռային, գարու հիբրիդներ-ցորեն 3500 և 1240 գարու սորտ: Հատիկաընդավոր բույսերի ընդհանուր թիվը ներառում է ոսպի, վիկի, սիսեռի, սոյայի և գետնանուշի 80 սորտ:

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության <<Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն>>



ՊՈԱԿ-ն ունի սերմերի հավաքածու, որը բաղկացած է 600 նմուշից, ներառյալ լոլիկ, պղպեղ, սմբուկ, սեխ, ձմերուկ, դդում: Հավաքածուի հիմնական մասը մշակված ձևեր են՝ ստացված հիմնականում օտար (455 կուլտուրական մշակաբույս) և հայկական (84 կուլտուրական մշակաբույս տարատեսակների սելեկցիայի արդյունքում:

Խաղողի և մրգերի կենդանի հավաքածուն գտնվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոնում>> ՊՈԱԿ-ում: Գիտական կենտրոնի տնկարանի 370 տեսակից 260-ը մրգատու են, հատկապես ծիրանենին, դեղձենին, խնձորենին, տանձենին, նռնենին, թզենին և այլն: Գինու վայրի տեսակների

հավաքածուն ունի շուրջ 30 նմուշ և կարող է օգտագործվել որպես գինու բարձրարժեք ձևերի ստեղծման աղբյուր:

ՀՀ Գիտությունների ազգային Ակադեմիայի բուսաբանական այգու կենդանի հավաքածուի մեջ գոյություն ունի պտղա-հատապտղային մշակաբույսերի տեսակների վայրի ցեղակիցների 40 տեսակ:

Գյուղատնտեսական և պարենային բույսերի կենսաբազմազանության <<in-situ-on farm>> պահպանությունը

Մեզ շրջապատող կենդանական և բուսական բազմազանությունը կենդանի բոլոր օրգանիզմներին բնորոշ երկու հիմնական առանձնահատկությունների՝ ժառանգականության և փոփոխականության արգասիքն է: Ցանկացած կենսաբանական տեսակ կարող է գոյատևել միայն այդ երկու առանձնահատկությունների միջև հավասարակշռության առկայության դեպքում: Այդ հավասարակշռության շնորհիվ տասնյակ միլիոնավոր տարիների ընթացքում ստեղծվել է շատ դինամիկ, բայց փխրուն հավասարակշռություն կենդանական, բուսական և այլ օրգանիզմների տարատեսակների և շրջակա միջավայրի միջև:



Միլիոնավոր տարիների այդ հավասարակշռությունը խախտվել է միայն երկրաբանական կատակլիզմների արդյունքում (երկրաշարժեր, հրդեհներ, ջրհեղեղներ, կլիմայի գլոբալ փոփոխություններ և այլն), որից հետո, վաղ թե ուշ հաստատվել է նոր հավասարակշռություն: Մակայն շուրջ 10000 տարի առաջ այդ հավասարակշռությանը սկսեց միջամտել մարդը՝ տարեցտարի հարածող ակտիվությամբ և հանդիսանալով բնության հավասարակշռության շղթայի օղակներից մեկը՝ չունենալով մեծ ներգործություն համակարգի վրա, և նրա միջամտությունն արտահայտվում էր կենդանիների որսով, սակայն շուտով սկսեց ընտելացնել կենդանիներին և սկիզբ դրեց երկրագործությանը: Այդ ժամանակից մարդու միջամտությունը բնական հավասարակշռության պրոցեսներին գնալով ձեռք է բերում ավելի դրամատիկ և հաճախ բախտորոշ նշանակություն:

Կենսաբազմազանության բաղադրիչ մասն է կազմում գենետիկական բազմազանությունը:

- **Գենետիկական բազմազանությունը**՝ փոփոխականություն է, որը գոյություն ունի տվյալ պոպուլյացիայի կամ տեսակի շրջանակներում: Այս բազմազանությունն ընկած է գենետիկական ռեսուրսների հիմքում:
- **Գենետիկական պաշարներ**՝ նշանակում է փաստացի կամ պոտենցիալ ներկայացնող գենետիկական նյութ:

Գենետիկական ռեսուրսներն այն շտեմարանն են, որտեղից թե՛ բնությունը, թե՛ մարդը վերցնում են ելանյութը նոր տարատեսակներ ստեղծելու համար. մարդը՝ նոր սելեկցիոն սորտեր, իսկ բնությունը՝ դրանց նոր վայրի ազգակիցներ:

Այս տեսակետից նույնպես կարևորվում է կենսաբազմազանության, որպես գենետիկական պաշարների <<շտեմարանի>> պահպանման անհրաժեշտությունը: Առավել կարևորվում է պարենային և գյուղատնտեսական բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանությունը:

Գյուղատնտեսական նպատակներով օգտագործվում էին շուրջ 10000 բուսատեսակ, սակայն այժմ օգտագործվող բուսական ծագման սննդամթերքի 90 տոկոսը ստացվում է ընդամենը 120 բուսատեսակներից: Մարդկության կողմից օգտագործվող կալորիաների 60 տոկոսն ապահովվում է միայն 3 բուսատեսակներով՝ բրինձ, ցորեն, եգիպտացորեն: Միաժամանակ, անշեղորեն կրճատվում է ֆերմերների կողմից օգտագործվող սորտերի տեսականին: Նախընտրությունը տրվում է բարձր բերքատու սորտերին, որոնք, սակայն հաճախ չունեն գենետիկական ճկունություն, ինչը բնորոշ է ավանդական սորտերի համար:

Մյուս կողմից երկրագնդի վրա տեղի ունեցող գլոբալ փոփոխությունները և օրեցօր աճող մարդածին ճնշումը կործանման եզրին են հասցրել պարենային և գյուղատնտեսական մշակաբույսերի վայրի ցեղակիցներին, որոնք հանդիսանում են բազմազան գեների շտեմարան սելեկցիոնների համար:



Այս ամենը նկատելիորեն սահմանափակում է նոր սորտերի ստացումը, որոնք անհրաժեշտ են սպասվելիք բարդ խնդիրների լուծման համար: Այս բոլոր հիմնահարցերը ծառացած են հարուստ կենսատեսուրսներով փոքրատարածք Հայաստանի առջև:

Գենետիկական ռեսուրսների պահպանությունն ունի միջազգային, տարածաշրջանային և ազգային հնչողություն:

Միջազգային մասշտաբով գենետիկական ռեսուրսների պահպանությունը կոչված է ապահովելու միջազգային հանրության հնարավորությունները երրորդ հազարամյակի մարտահրավերներին դիմակայելու համար: Արդեն այսօր 800 միլիոն մարդ մատնված է սովի: Եթե չձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ, ապա մոտակա 30-35 տարում այդ թիվը կհասնի 2 միլիարդի:

Տարածաշրջանային մասշտաբով գենետիկական ռեսուրսների պահպանությունը պահանջում է համախմբել ռեգիոնի երկրների ուժերը համատեղ ջանքերով առաջընթաց ապահովելու համար, քանի որ ո՛չ գենետիկական ռեսուրսները, ո՛չ էլ դրանց հանդեպ վտանգները պետական սահմաններ չեն ճանաչում: Հարկ է նաև նկատի ունենալ, որ գենետիկական ռեսուրսների պահպանման հիմնահարցերը, որպես կանոն, ընդհանուր են տարածաշրջանի բոլոր երկրների համար:

Ազգային մասշտաբով գենետիկական ռեսուրսների պահպանությունն ունի ռազմավարական նշանակություն արտակարգ իրավիճակներում (պատերազմ, շրջափակում, երկրաշարժ, ջրհեղեղ և այլն) երկրի պարենային անվտանգությունն ապահովելու համար:

Միջազգայնորեն ընդունված են գենետիկական ռեսուրսների պահպանման <<in-situ>> և <<ex-situ>> եղանակները: Այդ երկու ուղղություններով էլ Հայաստանը ձեռնարկում է անհրաժեշտ (թեկուզ և ոչ բավարար) քայլեր:

Այս աշխատանքներում առավել ակտիվ են

ՀՀ Բնապահպանության և Գյուղատնտեսության նախարարությունները, Գիտությունների ազգային ակադեմիան, Հայկական ագրարային համալսարանը և գյուղատնտեսության նախարարության գիտական կենտրոնները: Բացի իրենց բնօրրանից,

բույսերի պահպանման համար ստեղծվել են նաև սերմերի հավաքածուներ, որոնցում պահպանվում են հազարավոր նմուշներ:

Ավանդաբար <<ex-situ>> պահպանման եղանակը գլոբալ մակարդակով օգտագործվել է պարենային և գյուղատնտեսական բույսերի պահպանման համար և ներառել է այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են կրիոպահպանությունը, դաշտային գեն բանկերը, <<in vitro>> պահպանումը, կենդանի բույսերի պահպանությունը բուսաբանական այգիներում և այլն: Մինչդեռ <<in-situ>> եղանակն ավանդաբար օգտագործվել է անտառների, վայրի տեսակների, արժեքավոր ֆլորա և ֆաունա ունեցող տարածքների պահպանման նպատակով: Մակայն այսօր մասնագետներն աստիճանաբար հանգում են այն եզրակացության, որ նման մոտեցումը միակողմանի է, քանի որ երկու եղանակներն էլ ունեն իրենց առավելություններն ու թերությունները: Առավել արդյունավետ է այդ եղանակների համատեղումն ու պահպանումը, այսպես կոչված, ինտեգրացված մոտեցումը:



Այս կարգի պահպանությունը հայտնի է <<in-situ>> (on-farm)- կամ գենետիկական ռեսուրսների պահպանումը տնտեսության (ագարակի) պայմաններում: <<In-situ>> (on-farm) պահպանությունը նկատի ունի <<Ֆերմերի կողմից պոպուլյացիաների բազմազան հավաքակազմի անընդմեջ բազմացումը այն էկոհամակարգերում, որոնցում զարգացել է տվյալ մշակաբույսը>>: Կենսաբազմազանության <<in-situ>> պահպանումն ագարակի պայմաններում ենթադրում է ամբողջական էկոհամակարգեր՝ ներառյալ անմիջականորեն օգտակար բուսատեսակները (գյուղատնտեսական մշակաբույսեր, կերաբույսեր և անտառներ), ինչպես նաև նրանց վայրի և մոլախոտային ազգակիցները, որոնք կարող են աճել մոտակա հողատարածքներում: Ագրոէկոհամակարգը տվյալ էկոհամակարգի կարևորագույն բաղադրիչներից է:

Ինչու՞ է պետք պահպանել կենսաբազմազանությունն ագարակում և ինչն է անհրաժեշտ պահպանել

Այս հարցին պատասխանելու համար հարկ է հետադարձ հայացք նետել պատմությանը: Նախքան համայնացումը, գյուղացին իր բերքից նախ վերցնում էր իր սերմնացուն, որպես սերմնացու ընտրում էր այն սորտը, որը գալիս էր երբեմնի դարերով:



Դարերի ընթացքում գյուղացին կատարում էր ընտրություն փորձնական ճանապարհով, և աստիճանաբար ձևավորվում էին սորտեր, որոնք այսօր անվանվում են վաղնջական <<պարզունակ>> սորտեր կամ լանդրասներ: Այդ <<պարզունակ>> սորտերին բնորոշ է մեծ ճկունությունը, տեղային պայմանների հարմարվողականությունը, ինչպես նաև ցրտադիմացկունությունը, երաշտի, հիվանդությունների, վնասատուների նկատմամբ տոլերանտությունը, համային և այլ հատկանիշները: Ամեն մի շրջան, գյուղ, նույնիսկ ընտանիք ուներ իր <<սեփական>> սորտը: Այդ պատճառով Հայաստանում կային

հազարավոր տեղական վաղնջական սորտեր ամեն մի տեղանքի և նույնիսկ հողակտորի համար: Մեր ժողովուրդն իր օրհասական պահերին իր հետ վերցնում էր <<իր>> սորտերը:

Սակայն, համայնավարական կոլխոզները և սովխոզները իրենց համակենտրոնացված սերմնամատակարարման համակարգով 70 տարիների ընթացքում, գործնականորեն, ոչնչացրցին ոչ միայն վաղնջական սորտերը, այլև նրանց ստացման, մշակման, կատարելագործման և պահպանման ավանդույթները:

Անկախության և հողի մասնավորեցման 20 տարիներն ավելի վատթարացրեցին վիճակը: Խորհրդային համակենտրոնացված սերմնամատակարարման տարիներին փոխարինելու եկան պատահական, անհայտ ծագման, ինքնագործ մատակարարողների և ներմուծողների սերմնամատակարարման տարիները: Մյուս կողմից, կազմակերպված սերմնամատակարարումների արդյունքում Հայաստան են ներմուծվել բարձր բերքատու, ինտենսիվ տեխնոլոգիաներով աճեցվող սորտեր, որոնք աստիճանաբար դուրս են մղում դեռ ինչ-որ ձևով պահպանված տեղական սորտերին: Չնայած ներմուծված սորտերն ավելի բերքատու են, սակայն պահանջում են ավելի թանկ և աշխատատար, ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառում, չունեն նույն համային հատկանիշները, ինչ տեղական սորտերը, վատ են հարմարված տեղական բնակլիմայական պայմաններին և մշակման ավանդույթներին: Եթե չձեռնարկվեն տեղական վաղնջական սորտերի պահպանմանն ուղղված միջոցառումներ, ապա կա վտանգ, որ կվերանան հրաշքով պահպանված վերջին լանդրասները և դրանց հետ այն օգտակար գեները, որոնք կուտակվել են հազարամյակների ընթացքում:

Նմանատիպ միտումներ կան նաև միջազգային մասշտաբով: Այս պատճառով միջազգային հանրությունը ձեռնարկում է քայլեր կենսաբազմազանության և գենետիկական ռեսուրսների <<in-situ>> (on-farm) պահպանության ուղղությամբ: Կազմված են ցանկեր, որոնցում ընդգրկված են այն բուսատեսակները, որոնց լանդրասները և վայրի ու մոլախոտային ազգակիցները կարիք ունեն առաջնահերթ պահպանման: Լանդրասների և նրանց վայրի ու մոլախոտային ազգակիցների կենսաբազմազանության պահպանումը բավականին բարդ է, ինչը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնք կարող են ներագդել ազարակներում գենետիկական ռեսուրսների <<in-situ>> պահպանման պրոցեսների վրա:

Կենսաբազմազանության <<in-situ> պահպանությունն ազարակների պայմաններում, բացի բուսական գենետիկական ռեսուրսների խնայման, կենսաբազմազանության պահպանման առաքինություններից առանձնանում է եզակի առանձնահատկություններով, որոնք վերաբերում են ինչպես ագրոէկոհամակարգի վիճակին, այնպես էլ մարդկանց բարօրությանը: Այդ առանձնահատկություններն են՝



Էվոլյուցիայի և ադապտացիայի պրոցեսների պահպանությունը

Ագրոբազմազանության պահպանությունը բոլոր մակարդակներով տեղանքի, շրջակա միջավայրի պայմաններում օժանդակում է Էվոլյուցիայի և ադապտացիայի պրոցեսների անընդմեջ ընթացքին, ինչը կարևորագույն հատկանիշ է <<in-situ>> եղանակի համար, քանի որ այն հիմնվում է ոչ միայն գոյություն ունեցող գերմպլազմայի, այլև այն պայմանների վրա, որոնք հնարավոր են դարձնում նոր գերմպլազմայի առաջացումը և զարգացումը: Դինամիկ պահպանման միտքը տարածվում

է գյուղատնտեսական արտադրական ամբողջ համակարգի վրա, ներառյալ վայրի և մոլախոտային բուսատեսակների, որոնք կարող են փոխազդել իրենց կուլտուրական ազգակիցների (լանդրասների) հետ:

***Կենսաբազմազանության պահպանությունը տարբեր մակարդակներում՝
էկոհամակարգի, միջտեսակային և գենետիկական (ներտեսակային)***

Ագրոէկոհամակարգի կառուցվածքի պահպանությունն իր բոլոր կենսախորշերով և դրանց փոխներազդեցություններով ապահովում է էվոյուցիոն և ադապտացիոն պրոցեսները, որոնք ընդլայնում են գենետիկական բազմազանությունը: Ագրոէկոհամակարգում բույսերի, կենդանիների և մանրէների տեսակների և տեսակի սահմաններում գենետիկական բազմազանության պահպանումն ապահովում են փոխներազդեցությունների բազմազանությունը բուսական պոպուլյացիաների մակարդակով: Բոլոր երեք մակարդակներով ագրոէկենսաբազմազանության, ինչպես և տարատեսակ փոխներգործությունների պահպանումը նպաստում են գյուղատնտեսական համակարգերն առողջ էկոհամակարգի սկզբունքների հաստատմանը:

էկոհամակարգերի ֆունկցիաների պահպանումը

Ագարակներում գենետիկական բազմազանության պահպանմանն ուղղված միջոցառումները կարող են ապահովել տեղական ագրոէկոհամակարգի կայունության պահպանումը, մասնավորապես, հողագոյացման պրոցեսների, քիմիկատներով աղտոտվածության նվազեցումը, բույսերի հիվանդությունների վերահսկողությունը և այլն:

***Ագարակատերերի (ագարակապաններ, ֆերմերներ) ներգրավումը
բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության ազգային
համակարգի մեջ***



Հավանաբար ագարակապաններն ավելի լավ գիտեն գյուղատնտեսական բույսերի տեղական ռեսուրսների ծավալը և բնույթը, քանի որ նրանք հետևում են գենետիկական բազմազանությունն իրենց դաշտերում ամեն օր: Այդ պատճառով ագարակապանների ներգրավումն ավելի արդյունավետ կդարձնի համագործակցությունը կենսաբազմազանության ազգային ծրագրերի

շրջանակներում:

Ագարակապանների կենսամակարդակի բարձրացումը

Ագարակապաններն օգուտ կստանան կայուն գենետիկական բազմազանությունից և առողջ էկոհամակարգից, որոնք պահպանվում են տվյալ տարածքում՝ ամրացնելով տեղական ռեսուրսները:

Օգուտ հասարակության և ագարակապանների համար

Ագրոկենսաբազմազանության պահպանության կարևորությունը պարենային գլոբալ անվտանգության առումով կայանում է նրանում, որ այն կարող է գյուղատնտեսական բույսերի սելեկցիոններին ապահովել գերմալազմայով: Ագարակում ագրոկենսաբազմազանության պահպանությունը նպաստում է գյուղատնտեսական բույսերի էվոլյուցիային և ադապտացիային, ինչը նպաստում է նոր գերմալազմայի առաջացմանը: Հասարակությունն օգուտ կստանա կայուն ագրոէկոհամակարգից և քիմիական նյութերի կիրառման սահմանափակումից, ի շնորհիվ տեղական սորտերի կիրառման, իսկ ագարակապանի համար կապահովի ավանդույթների պահպանումը, կթեթևացնի ագարակապանի աշխատանքը, բյուջեի խնայողությունը, կսահմանափակի հիվանդությունների, վնասատուների ու արտաքին միջավայրի այլ պարենային ճնշումները և կերաշխավորի նոր գենետիկական նյութի առաջացումը, ինչը կարող է բխստորոշ լինել շրջակա միջավայրի կամ սոցիալ-տնտեսական փոփոխությունների դեպքում:

Հայաստանը կարիք ունի արդյունավետ երկարաժամկետ մշակման, որոնք կապահովեն ագարակներում բույսերի գենետիկական բազմազանության պահպանումը: Սա առավել կարևոր է Հայաստանի համար, որը ըստ Ն.Վավիլովի գյուղատնտեսական բույսերի և դրանց բազմազանության համաշխարհային կենտրոններից մեկն է:

Հայաստանը բույսերի <<in-situ>> (on-farm) պահպանությունը պահանջում է այդ ոլորտը կարգավորող համակարգի կատարելագործում և պահպանման ծրագրերի լրամշակում: Ովքե՞ր են ներգրավվում <<on-farm>> պահպանման համակարգում.

- **Ագարակապանները:** Քանի որ ագարակապանները գործնականում իրագործում են ագրոբազմազանության <<on-farm>> պահպանությունը, ապա նրանց մասնակցությունը ծրագրերի հաջողության հիմքն է:
- **Ագարակապանների կազմակերպությունները,** որոնք կարող են ներկայացնել վերջիններիս շահերը:
- **Համայնքային կառույցները,** որոնք տեղում կարող են սատարել կենսաբազմազանության պահպանման նախաձեռնությունները:
- **Հասարակական կազմակերպությունները,** որոնք կարող են ներկայացնել տեղական, ազգային կամ տարածաշրջանային շահերը: Դրանք կարող են լինել հասարակական

կազմակերպություններ, որոնք ունենալով բնապահպանական առաքելություն, պաշտպանում են հասարակության իրավունքները:

- **Գիտահետազոտական կազմակերպությունները**, որոնք կարող են շահագրգռված լինել ագրոկենսաբազմազանության պահպանմամբ կամ զարգացմամբ: Բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման գիտական կենտրոնները պետք է կատարեն համակարգը շաղկապող դեր:
- **ՀՀ բնապահպանության և գյուղատնտեսական նախարարությունները, պետական լիազոր այլ մարմինները** կոչված են աջակցելու կենսաբազմազանության <<on-farm>> պահպանման համակարգի անխափան աշխատանքներին:
- **Միջազգային կազմակերպությունները**, որոնք կարող են ցուցաբերել տեխնիկական, քաղաքական աջակցություն, ինչպես նաև ագրոկենսաբազմազանության <<on-farm>> պահպանմանն ուղղված կենկրետ նախաձեռնությունների կոորդինացում:

Այս տիպի համակարգերը պետք է գործեն զլոբալ, ազգային և տեղական մակարդակներում: Այդ համակարգի ստեղծումը կարող է պահանջել մեծ ջանքեր տարբեր հորիզոնական և հիերարխիական պատնեշները հաղթահարելու համար: Համակարգի աշխատանքների հաջող ընթացքը մեծապես կախված է ծրագրերի ճիշտ ընտրությունից և իրատեսական պլանավորումից, իրազեկման և ուսուցման աշխատանքներից: Ըստ որում, իրազեկման և ուսուցման աշխատանքները պետք է ուղղված լինեն ոչ միայն ազարակապաններին, այլև ծրագրում ընդգրկված աշխատակազմին: Ուսուցման համակարգը պետք է բարձրացնի ազգային գիտելիքների մակարդակը պոպուլյացիոն գենետիկայի, էկոլոգիայի, կենսաաշխարհագրության, կենսաբանության, տնտեսագիտության, հասարակագիտության, սելեկցիայի և այլ ասպարեզներում:

Ստեղծված համակարգի հաջողության գրավականը <<in-situ-on-farm>> պահպանության եղանակը կապված է մեծ բարդությունների և դժվարությունների հետ: Միայն բարձր մասնագիտական պատրաստակամություն ունեցող մուլտիդիսցիպլինար թիմն է՝ ի վիճակի ազարակապանների հետ համատեղ կատարել ինչպես բազմազանության ճիշտ գնահատում, այնպես էլ լանդրասների ճիշտ ընտրություն և դրանց պահպանման արդյունավետ ռազմավարության մշակում և իրագործում:

Գեների հոսքը և դրանց կառավարումն ազարակապանների կողմից

Մշակաբույսերի վայրի ցեղակիցները կարող են լինել լանդրասների համար նոր գենետիկական բազմազանության աղբյուր: Դա հատկապես վերաբերում է մշակաբույսերի



Էվոլյուցիայի կենտրոններին, որոնցում մշակաբույսերն աճում են իրենց վայրի ազգակիցների հարևանությամբ: Իրենց վայրի ազգակիցներից սորտերը կարող են ստանալ գենետիկական նյութ հիբրիդիզացիայի և ինտրոգրեսիայի միջոցով: Հիբրիդիզացիան կարող է տեղի ունենալ տարբեր տաքսոնների միջև (օրինակ՝ գարու և դրա վայրի նախնի՝ *Hordeum vulgar subsp. spontaneum*): Ինտրոգրեսիան էվոլյուցիայի կարևորագույն մասն է կազմում և խիստ կարևորվում է <<in-situ-on-farm>> ծրագրերի

սահմաններում: Մյուս կողմից ընտանիացումը մշակաբույսերի նոր տեսակների

առաջացման պրոցեսն է և ագարակապանների կողմից ցանկալի հատկանիշների անմիջական ընտրության մեթոդը: Սակայն գեների գերիշխող վայրի ազդակիցներից կարող է վտանգել ագարակապանների նվաճումներն այդ ոլորտում: Ագարակապանները գիտակցելով՝ կարող են կա՛մ արագացնել, կա՛մ խանգարել հիբրիդիզացման և ինտրոգրեսիայի պրոցեսները, ընդ որում, հաշվի առնելով, որ լանդրասները կարող են հիբրիդներ առաջացնել ինչպես իրենց վայրի և մոլախոտային ազդակիցների, այնպես էլ ժամանակակից կամ հարևան ագարակապանների սորտերի հետ:

Մյուս կարևոր պրոցեսը, որի ուսումնասիրությունը անխուսափելիորեն պետք է ներառվի <<in-situ-on-farm>> պահպանության ծրագրում, դա սերմերի հոսքն է: **Սերմերի հոսքը** կարևոր գործոն է գենետիկական բազմազանության պահպանության պրոցեսներում: Ամեն տարի ագարակապանները ընտրում են սերմերի և դրանց ցանքատարածքները և այդ սերմերի հայթայթման ուղիները:

Ագարակապանները սերմեր ստանում են տարբեր ճանապարհներով.

- սեփական բերքից առանձնացված սերմնացու
- ուրիշ ագարակապաններից ձեռք բերված սերմեր
- շուկաներից
- սերմնապահովման ավանդական (ոչ ֆորմալ) համակարգով
- սերմնապահովման ֆորմալ համակարգով:

Սերմնային համակարգը կազմված է անհատներից կամ կազմակերպություններից, որոնք զբաղված են սերմերի ստեղծման, բազմացման, պահեստավորման, բաշխման և մարքեթինգի գործընթացներով:

<<On-farm>> պահպանման տեսանկյունից <<սերմնային համակարգը>> անորոշ է, քանի որ գոյություն չունի մեկ որոշակի ուղի, որով ագարակապանները ձեռք են բերում և բազմացնում սերմեր: Կախված հանգամանքներից՝ ագարակապաններն օգտվում են սերմերի հայթայթման տարբեր ուղիներից: Սերմնապահովման ավանդական (ոչ ֆորմալ) համակարգում սերմերն արտադրվում և տարածվում են փոքր ագարակապանների կողմից, որոնցով էլ հենց պահպանվում են վաղնջական պարզունակ սորտերը:

Սերմնապահովման ֆորմալ համակարգը մատակարարում է սելեկցիոնների կողմից ստեղծված ժամանակակից սորտեր, որոնք տարածվում են ազգային գիտական ծրագրերի, սերմերի արտադրությունում մասնագիտացված տնտեսությունների, միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից: Այս համակարգը վտանգում է վաղնջական սորտերի <<in-situ>> պահպանությունը:

Ագարակապանը դիմում է սերմերի արտաքին աղբյուրներին հետևյալ դեպքերում.

- արտակարգ իրավիճակներում, երբ նկատվում է սերմնացուի պակաս
- աղքատության պարագայում, երբ ագարակապանը ստիպված է օգտագործել կամ վաճառել իր սերմնացուն
- սերմերի որակը, որը միշտ չէ որ հնարավոր է ապահովել տնտեսության պայմաններում կամ հիբրիդային սերմեր օգտագործելու դեպքում, սորտափոխանակում, երբ ագարակապանը ձգտում է օգտագործել նոր սորտ:

Հայաստանի պայմաններում սերմնապահովումը կատարվում է տարբեր ճանապարհներով և զգալիորեն կախված է մշակաբույսերի տեսակից: Օրինակ՝ կարտոֆիլի և լոլիկի դեպքում գործնականորեն շուկան զբաղված է արտասահմանյան

սելեկցիոն սորտերով (ոչ միշտ լավագույն) և վաղնջական սորտերի հայտնաբերումն անգամ պրոբլեմային է:

<<In-situ-on-farm>> պահպանման համակարգը պետք է ներառի իր մեջ ոչ միայն վաղնջական սորտերի հայտնաբերումը, այլև այդ սորտերի ինքնուրույն պահպանումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վաղնջական սորտերի ինքնության (մաքրության, <<խսկության>>) պահպանումը վտանգված է բազմաթիվ գործոններով, որոնցից կարևորագույններն են՝

- *Սորտերի <<կրկնակի ցիկլը>>:* Կախված սորտի մշակման համակարգից և սերմեր ընտրելուց, օգտագործելուց սորտը ենթարկվում է փոխակերպումների ազարակի պայմաննորում:
- *Սերմերի կանխամտածված ընտրություն ազարակապանների կողմից:* Կախված տարբեր նկատառումներից (օգուտ, շուկայական տեսք, բարձր բերքատվության և այլն) ազարակապանները կատարում են սերմերի ընտրություն, ինչը ժամանակի ընթացքում հանգեցնում է վաղնջական սորտի փոփոխությանը:
- *Սերմերի ոչ կանխամտածված խառնում:* Հաճախ ազարակում տեղի է ունենում սորտերի ոչ կանխամտածված խառնում, ինչի արդյունքում վաղնջական սորտերը կարող են աստիճանաբար անհետանալ:
- *Խառնասորտություն:* Ազարակի պայմաններում հաճախ է տեղի ունենում սերմերի մեխանիկական խառնում (խառնասորտություն):
- *Գենետիկական դրեյֆ:* Ոչ միշտ հեշտությամբ պարզվող հանգամանքներում սորտապուլյացիաներում տեղի է ունենում գեների տարբեր փոխատեսակների (ալելներ) հարաբերության փոփոխություն տվյալ սորտապուլյացիայի սահմաններում (գենետիկական դրեյֆ), արդյունքում պուլյացիայում տարածված գենի մի փոխատեսակը աստիճանաբար զիջում է իր տեղը մեկ ուրիշ տարատեսակի, ինչը վերջին հաշվով հանգեցնում է վաղնջական սորտի անվերահսկելի փոփոխությանը:
- *Մուտացիաներ:* Ցանկացած պուլյացիայում (այդ թվում և վաղնջական սորտապուլյացիաներում) տեղի է ունենում գենետիկական կառուցվածքի ճեղքում (կոնսոտիտուցիա), ինչի արդյունքում սորտապուլյացիան կորցնում է իր համասեռությունը: Որքան գենետիկորեն ավելի բարդ է սորտապուլյացիան, այնքան գենետիկական ճեղքման և սորտապուլյացիայի համասեռության կորստի հավանականությունը ավելի է բարձրանում: Պրոցեսը խիստ մասնագիտական մոնիթորինգի կարիք ունի:
- *Բնական ընտրություն:* Իրենց բազմացման ընթացքում սորտապուլյացիաները ենթակա են վերը թվարկված (և ոչ միայն) փոփոխությունների: Այդ փոփոխությունները ենթարկվում են բնական ընտրության միջոցով <<զտմանը>>: Բնական ընտրությունը, մեր տեսանկյունից, ոչ միշտ է <<ճիշտ>> ընտրություն կատարում: Արդյունքում փոփոխությունների մի մասը <<ընտրվում են>>, մյուսները (որոնք կարող են մեր տեսակետից ավելի նախընտրելի թվալ)՝ ոչ:

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության հիմքում ընկած են երկու մոտեցումներ՝ շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների ռացիոնալ օգտագործում, որոնք հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում կարիք ունեն կատարելագործման և միջազգային օրենսդրական չափանիշների համապատասխանեցման:

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրինաստեղծման հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածը, որտեղ շրջակա միջավայրի պահպանությունը, դրա վերարտադրությունը, ինչպես նաև բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը երաշխավորվում է պետության կողմից:



Հայաստանում բուսական աշխարհի օբյեկտների պահպանությունը կարգավորվում է մի շարք օրենքներով, նորմատիվ իրավական ակտերով և միջազգային համաձայնագրերով:

Բուսական աշխարհի պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության բնագավառում վայրի բուսական օբյեկտների նկատմամբ պետական քաղաքականությունը ապահովում է 1999թվականին ընդունված «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն՝ պահպանությունը պետք է իրականացվի բոլոր բուսատեսակների և դրանց ապրելավայրի նկատմամբ՝ անկախ դրանց տնտեսական կամ այլ արժեքների: Առավել ևս հատուկ պահպանական ռեժիմի տակ են վերցվում Հայաստանի ֆլորայի հազվագյուտ և անհետացող, ինչպես նաև Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները: Արդյունաբերական նպատակով բուսական աշխարհի օբյեկտների օգտագործումն իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության կողմից տրված թույլտվության հիման վրա: Թույլտվության առկայության դեպքում բուսական աշխարհի օբյեկտներ օգտագործողը կնքում է պայմանագիր հողօգտագործողի կամ հողի սեփականատիրոջ հետ բուսական հումքի հավաքի/մթերման համար:

Դեռևս 1994թ. ընդունված «Անտառային օրենսգիրքը» կարգավորում է անտառի պահպանությունն ու օգտագործումը, ներառյալ մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանությունը պետական սեփակա-նություն հանդիսացող անտառային ֆոնդի տարածքներում: Ընդ որում, օրենքով սահմանվում է, որ բոլոր անտառները հանդիսանում են պետական սեփականություն, և կառավարությունը պատասխանատվություն է կրում դրանց օգտագործման համար:

ՀՀ Անտառային օրենսգրքի հիմնախնդիրներն են.

- անտառի օգտագործման բնական հատկությունների պահպանումը
- վերարտադրության ու արտադրողականության բարձրացումը
- անտառային պաշարների բազմակողմանի և արդյունավետ օգտագործումը
- անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն ու օրինականության ամրապնդումը:

Հաշվի առնելով, որ ՀՀ անտառային օրենսգիրքը ընդունվել է սեփականաշնորհման իրավունքի ձևավորման և տնտեսական բարեփոխումների վաղ շրջանում, ներկայումս ամրագրված սկզբունքների որոշ մասը չի գործում:

Բնականաբար, օրենսգրքի ընդունումից հետո անցած քսանամյակում մեր երկրում տեղի ունեցած փոփոխությունները (հողի սեփականաշնորհման լայնածավալ գործընթացը, մասնավոր սեկտորի արագ զարգացումը, տեղական համայնքների իրավասությունների մեծացումը և այլն) թելադրում են գտնել և կիրառել նոր մոտեցումներ անտառային ոլորտում, որոնք համահունչ կլինեն երկրի համընդհանուր զարգացմանը:



Ներկայումս պետական անտառային ֆոնդի հողատարածքներում բուսական աշխարհի օբյեկտների օգտագործումն իրականացվում է վարձակալական հիմունքներով:

<<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքը սահմանում է հատուկ պահպանվող տարածքների հիմնադրման և կառավարման սկզբունքները, ինչպես նաև Հայաստանում բնության հատուկ պահպանվող տարածքների կատեգորիաները (պետական արգելոց, պետական արգելավայր, ազգային պարկ և բնության հուշարձան):

Օրենքում առանձին հոդվածներով սահմանված են նշված հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման ռեժիմները, թույլատրելի ձևերը:

ԲՀՊՏ-ի օրենսդրության խնդիրներն են.

- կենսաբանական բազմազանության պահպանությունը
- բնական միջավայրի վիճակի հսկումը
- բնության չափանմուշային (Էտալոնային) երկրահամակարգերի հավասարակշռության պահպանությունը
- բնակչության էկոլոգիական կրթությունը, դաստիարակությունը և այլն:

ԲՀՊՏ-ները կազմավորվում են ՀՀ կառավարության որոշմամբ: Դրանց կառավարումն իրականացվում է ՀՀ հատկապես լիազորված պետական մարմնի կողմից, այսինքն՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

Նշված օրենքի ճիշտ և հստակ կիրառումից է կախված մեր երկրի գենետիկական ռեսուրսների ճակատագիրը, քանի որ ներկայումս բնության հատուկ պահպանվող

տարածքներում են կուտակված ՀՀ ֆլորայի մոտ 60 տոկոսը: Ինչպես «Անտառային օրենսգրքի» դեպքում, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ներկայումս գործող օրենքը չի համապատասխանում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակին, ինչպես նաև գիտության զարգացմանը զուգընթաց միջազգային մակարդակով տարվող գորընթացներին:

«Սելեկցիայի նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է բույսերի նոր սորտերի ստացման շուրջ առաջացող իրավահարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության համառոտ վերլուծությունից պարզ է դառնում, որ բույսերի գենետիկական ռեսուրսների և հատկապես մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության կամ օգտագործման խնդիրները հատուկ և հստակ ամրագրված չեն ազգային իրավական ակտերում: Դրանց հետ կապված հիմնախնդիրները կանոնակարգվում են միայն վերը նշված օրենքների շրջանակներում:

Կենսաբազմազանության մասին կոնվենցիան հանդիսանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության մաս, քանի որ երկրի կողմից վավերացված միջազգային համաձայնագրերի նորմերը ենթակա են ուղղակի կիրառման երկրի ներսում:

1992թ. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիան առաջին անգամ հաստատեց, որ կենսաբանական բազմազանության պահպանությունը հանդիսանում է ողջ մարդկության համընդհանուր խնդիր, իսկ պետությունները ինքնիշխան իրավունքներ ունեն իրենց պետական սահմանների ներսում առկա կենսաբանական պաշարների նկատմամբ: Կոնվենցիայում ամրագրված է, որ կենսաբանական բազմազանության պահպանությունը և կայուն օգտագործումը երկրագնդի աճող բնակչության պարենի և առողջապահության, ինչպես նաև այլ կարիքների բավարարման համար վճռական նշանակություն ունեն և գենետիկական պաշարների, տեխնոլոգիաների մատչելիությունն ու դրանց համատեղ օգտագործումը կարևոր են այդ խնդիրների լուծման համար:

Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան ունի երեք նպատակներ.

- կենսաբազմազանության պահպանությունը
- դրա բաղադրիչների կայուն օգտագործումը
- գենետիկ ռեսուրսների օգտագործումից առաջացող օգուտների արդարացի բաշխումը:

Ամրագրելով գենետիկական պաշարների հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող ընդհանուր դրույթները՝ կոնվենցիան ելակետային է համարում պետության ինքնիշխան իրավունքն իր պետական սահմանների ներսում առկա գենետիկական պաշարների նկատմամբ:

Այն սահմանում է գենետիկ ռեսուրսների մատչելիության և փոխանակման ընդհանուր սկզբունքները: Գենետիկ ռեսուրսները հասանելի են դառնում մատչելիություն հայցողի կողմից նախապես տեղեկացված համաձայնության ստացմամբ, և նշված հայցողի ու պետության (որը ռեսուրսների տերն է), ինչպես նաև այն տրամադրողների միջև փոխադարձ համաձայնեցված պայմանների համաձայն: «Օգուտների արդարացի և հավասար բաշխումը, ուսումնասիրությունների և զարգացումների արդյունքներն ու օգուտը, որն առաջանում է գենետիկ ռեսուրսների առևտրային և այլ օգտագործումներից...» պետք է դառնա փախադարձ համաձայնեցված պայմանների մաս (հոդված 15.7):

*Հայաստանի մշակաբույսների վայրի ցեղակիցների կառավարման
ինստիտուցիոնալ համակարգ*

Հայաստանի կենսաբազմազանության պահպանության ինստիտուցիոնալ համակարգը կազմված է նախարարություններից և այլ կառույցներից, որոնք կառավարում և վերահսկում են նշված բնագավառը: Կենսաբազմազանության պահպանության հետ առնչվում են մի շարք ընկերություններ, ձեռնարկություններ, հասարակական կազմակերպություններ և անհատ ձեռներեցներ:

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության կառավարումը, որպես առաջնահերթ խնդիր, դրված է ՀՀ Բնապահպանության նախարարության վրա, որը հանդիսանում է բուսական աշխարհի կառավարման (պահպանություն, կայուն օգտագործում և վերարտադրություն) պետական լիազորված մարմին:



Վերջինս պատասխանատու է հանրապետության կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառներում պետական քաղաքականության իրականացման և բնապահպանական նորմերի ապահովման, կենսաբազմազանության տեղում պահպանության և կայուն օգտագործման սկզբունքների մշակման և բնական պաշարների օգտագործման սկզբունքների մշակման և օգտագործման վերահսկողության իրականացման համար:

ՀՀ բնապահպանության նախարարության կառուցվածքում լանդշաֆտային և կեսաբանական բազմազանության ոլորտի կառավարման, միջգերատեսչական աշխատանքների կոորդինացման և միջազգային համագործակցության հարցերն իրականացվում է աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման՝ Շրջակա միջավայրի պահպանության վարչության Կենսաբազմազանության պահպանության բաժնի միջոցով:

2002թ. ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմում, որպես առանձնացված ստորաբաժանում, ստեղծվեց Կենսառեսուրսների կառավարման գործակալություն: Համաձայն իր կանոնադրության՝ գործակալությունը պատասխանատու է բնական էկոհամակարգերի, լանդշաֆտների և կենսաբանական բազմազանության, կենդանական և բուսական աշխարհների, բնության ժառանգության գիտական ուսումնասիրությունների, պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության ապահովման համար և աջակցում է այդ ոլորտների կառավարմանը: Պետական քաղաքական ձևակերպումն ու պայմանագրերի կնքումը ևս հանդիսանում է նշված գործակալության կանոնադրական գործառույթ:

Գործակալությունն իր կառուցվածքում ներառում է բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման բաժինը և պատասխանատու է հետևյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) կառավարման համար

<<Սևան>> ազգային պարկ ՊՈԱԿ



<<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ



**<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց
ՊՈԱԿ**



**<<Շիկահող>> պետական արգելոց
ՊՈԱԿ**



<<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ (ներառյալ <<Էրեբունի>> պետական արգելոց, <<Սև լիճ>> և <<Որդան Կարմիր>> պետական արգելավայրեր):

*Մշակաբույսերի վայրի ցեղակիցների
պահպանությունը
բնության հատուկ պահպանվող տարածքներում*

Բնության հատուկ պահպանվող տարածքները (այսուհետ՝ ԲՀՊՏ) հանդիսանում են բնական և մշակովի ռեսուրսների պահպանությանը նպաստող առավել հզոր միջոցներից մեկը: Պահպանվող տարածքները հարկ է ստեղծել այնտեղ, որտեղ պահանջվում է կենսաբազմազանության պահպանման համար հատուկ միջոցառումների ընդունում:

Ներկայումս հանրապետության բուսական և կենդանական աշխարհի տեսակների 60 տոկոսը, ներառյալ վտանգված բուսատեսակների մեծ մասը, պահպանվում են հատուկ պահպանվող տարածքներում:

Այդ տեսակներից լիովին հիմնավորված է <<Էրեբունի>> պետական արգելոցի ստեղծումը ՀՀ Կոտայքի մարզում, Երևան քաղաքի արվարձաններում: <<Էրեբունի>> պետական արգելոցը, զբաղեցնելով կիսաանապատային լանդշաֆտային գոտում 89 հա տարածք, հանդիսանում է եզակի պահպանվող տարածք գլոբալ մակարդակով, քանզի այստեղ պահպանության են վերցված լեռնային եզակի համալիրներ և կսերոֆիտ էնդեմիկ հացազգիների տեսակներ: Արգելոցում հանդիպող 232 բուսատեսակներից 61-ը ներկայացնում են մեր երկրի համար գենետիկական ոսկեֆոնդ հանդիսացող մշակության մեջ լայնորեն տարածված սորտերի վայրի ցեղակիցներ: Բուսական համակեցությունները հիմնականում կազմված են միամյա հացազգիներից՝ այծակն գլանաձև (Aegilops cylindrica), բթաթեփուկ անքիստ (Amblyopyrum muticum), աշորա Վավիլովի (Secale Vaviovii), ցորեն Ուրարտուի (T. Urartu) և այլն: Այստեղ կան ցորենի 100-ից ավելի տարատեսակներ: Հանդիպում են նաև այլ հազվագյուտ անհետացող տեսակներ, որոնք գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Դրանցից են հիբիկ ցանցավորը (Iris reticulata), աքմատագլխիկ արևելյանը (Rhizocephalus orientalis), հոհենակերիա անցոցունը (Hohenackeria excapa), կանկար տուրնեֆորի (Cundelia tournefortii) և այլն:

Մեծաթիվ քանակով մշակաբույսերի վայրի ցեղակիցներ հանդիպում են նաև այլ բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ <<Դիլիջան>> ազգային պարկում (ֆլորայի մոտ 10%), <<Խոսրովի անտառ>> (ֆլորայի մոտ 11%) և <<Շիկահող>> (ֆլորայի մոտ 12%) պետական արգելոցներում, մի շարք անտառային բնույթի արգելավայրերում:

ՀՀ բնապահպանության նախարարության կազմում գործում է <<Անտառի գիտափորձարարական կենտրոն>> ՊՈԱԿ-ը, որը պատասխանատու է Հանրապետության անտառների արդյունավետության բարձրացման, բնապահպանական հատկությունների բարելավման, գիտական և կիրառական հիմունքների մշակման, անտառաշինության և անտառային ֆոնդի հաշվառման, ինչպես նաև անտառային պաշարների մասին տվյալների բանկի ստեղծման համար:

Հանրապետական բնապահպանական պետական տեսչությունը հիմնական բնապահպանական գործունեության իրականացնող գործակալությունն է: Տեսչությունը վերահսկում է բնապահպանական օրենսդրության համապատասխանեցումը հետևյալ բնագավառներում՝ օդի և ջրի աղտոտում, հողօգտագործում, կենսաբազմազանության պահպանություն, անտառների պահպանություն:



Համաձայն իր կանոնադրության՝ պետական բնապահպանական տեսչության հիմնական նպատակն է աջակցել բնության պահպանության և բնական ռեսուրսների կայուն օգտագործմանն ու վերարտադրությանը: Տեսչությունը կենսառեսուրսների պահպանության և օգտագործման ոլորտում վերահսկում է կենդանական և բուսական աշխարհների, անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, օգտագործման և վերարտադրություն նորմերի և պայմանագրային պարտավորությունների, վայրի ֆլորայի և ֆաունայի օբյեկտների արտահանման և ներմուծման պահանջների, ինչպես նաև Կարմիր գրքում ներառված տեսակների պահպանության վերաբերյալ օրենսդրական պահանջների իրականացումը:

Տեղական իշխանությունները՝ համայնքները, պատասխանատվություն են կրում տարածքում ունեցվածքի կառավարման ու տեղական նշանակության խնդիրների լուծման համար: Շրջակա միջավայրի բնագավառում համայնքի ղեղավարը աջակցում է բնական պաշարների (հանքային ռեսուրսներ, անտառներ, կենսաբազմազանություն) պահպանությանն ու կայուն օգտագործմանը:

Ագրոկենսաբազմազանության և անտառների կառավարումն իրականացնում է նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը իր համակարգի կառուցվածքների միջոցով: Անտառների կառավարումը Հայաստանում իրականացվում է <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի կողմից, որի հիմնական գործառնություններից է անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության մշակումը, հեռանկարային ռազմավարական սկզբունքների զարգացումը, ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործումը:

Անտառային կենսաբազմազանության, այդ թվում մշակաբույսերի վայրի ցեղակիցների, պահպանության և օգտագործման առումով առավել կարևոր նշանակություն ունի <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող անտառային ֆոնդի (ներառյալ գենոֆոնդի) հաշվառումը և կադաստրի վարումը, ինչպես նաև անտառային պաշարների, այդ թվում կողմնարդյունքի (պտուղներ, սերմեր, սնկեր, դեղաբույսեր և այլն) արդյունավետ օգտագործման կազմակերպումը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ենթակայության տակ գտնվող կառույցների պատասխանատվության շրջանակները կենսաբազմազանության ոլորտում հետևյալն են.

- <<Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն>> ՊՓԲԸ-ն իրականացնում է աշնանացան ցորենի ու գարու, կերաբույսերի սելեկցիա, կարտոֆիլի կենսատեխնոլոգիայի ու դաշտային կուլտուրաների աճեցման տեխնոլոգիաների մշակում, սերմնաբուծություն, գյուղատնտեսական բույսերի, բազմամյա տնկիների և անտառների

հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի տեխնոլոգիաների մշակում:

- <<Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն>> ՊՓԲԸ-ն ապահովում է բանջարաբուստանային և տեխնիկական կուլտուրաների սելեկցիա և նպատակաուղղված է ընտրությունը՝ բանջարաբուստանային կուլտուրաների վերամշակման եղանակների մշակումը, կենսատեխնոլոգիայի կիրառումը դրանց սորտերի և հիբրիդների ստացման, արագ բազմացման համար:
- <<Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն>> ՊՓԲԸ-ն իրականացնում է պտղատու կուլտուրաների և խաղողի ուսումնասիրում, բազմացում և պահպանություն:
- <<Սելեկցիոն նվաճումների պաշտպանության և սերմերի որակի պետական կենտրոն>> ՊՓԲԸ-ն պատասխանատու է մշակաբույսերի նոր սորտերի փարձարկմանը, <<Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին>> ՀՀ օրենքին համապատասխան լիցենզիաների տրամադրմանը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նույնպես համակարգում է բույսերի գենետիկ ռեսուրսների հետ կապված գործողությունները: Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիայում բույսերի գենետիկական ռեսուրսների լաբորատորիայում պահպանվում են տարբեր բուսատեսակների սերմերի հավաքածուներ և ուսումնասիրվում են բույսերի գենետիկական ռեսուրսների մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական և ցիտոլոգիական հատկությունները:

Բույսերի գենետիկական ռեսուրսների մատչելիություն

Հազարամյակներ շարունակ հայ ժողովրդական սելեկցիայի նպատակների համար որպես հումք օգտագործվել են Հայաստանի տարածքում աճող մշակաբույսերի վայրի ցեղակիցներ: Գիտության զարգացման շնորհիվ բացահայտվեցին վերջիններիս արժեքավոր առանձնահատկությունները՝ որպես չորադիմացկունության, հիվանդությունների և միջատների դեմ դիմակայության գեներ կրողներ: Մշակաբույսերի վայրի ցեղակիցներն ունեն համընդհանուր արժեք, քանի որ մարդկանց սննդի և դեղորայքի անվտանգությունը, բազմազանությունը և հարստությունը ուղղակիորեն կախված են գենետիկական ռեսուրսների առկայության և մատչելիության հետ: Այդ գաղափարի ընկալումը կարող է կտրականապես փոխել մեր երկրում տարվող քաղաքականությունը բնական գենոֆոնդի պահպանության և օգտագործման բնագավառում:

Տարիներ ի վեր գենետիկ ռեսուրսները համարվում էին ընդհանուր սեփականություն, ինչը ենթադրում էր գենետիկ ռեսուրսների մատչելիությունը, ինչպես ներկայիս, այնպես էլ ապագա սերունդների համար: Խնդիրը առանձնակի կարևորություն է ստացել 20-րդ դարավերջում, երբ, կապված բուսական ու կենդանական գենետիկ ռեսուրսների բազմազանությանը սպառնացող վտանգ և կենսատեխնոլոգիաների զարգացման հետ, բարձրացավ գերմալազմայի դերն ու արժեքը՝ որպես սելեկցիոն հումք:

Ներկայումս գենետիկ ռեսուրսների մատչելիության և դրանց օգտագործման հետ կապված օգուտների արդարացի բաշխման հիմնախնդիրները կարգավորվում են <<Կենսաբազմազանության մասին>> կոնվենցիայի 15-րդ և 16-րդ հոդվածներով: Ելնելով կոնվենցիայի դրույթներից՝ յուրաքանչյուր երկիր իրավունք է ստանում կառավարել իր գենետիկ ռեսուրսները՝ համաձայն ազգային օրենսդրության պահանջների:

Պայմանագրային և անհատույց հիմքի վրա գործող բույսերի գենետիկ ռեսուրսների բաց և ազատ մատչելիությունը փոխարինելու եկավ ազատ, բայց արդեն ոչ անհատույց մեխանիզմ՝ հիմնված համատեղ սեփականության վրա, որը պետք է իրականացվի գենետիկ ռեսուրսների առաքողների-սպառողների միջև երկկողմանի կամ բազմակողմանի համաձայնագրերի հիման վրա:

Միևնույն ժամանակ կոնվենցիան վավերացրած երկրները պետք է պայմաններ ստեղծեն գենետիկ ռեսուրսների մատչելիությունն ավելի դյուրին դարձնելու մյուս երկրների համար՝ դրանք էկոլոգիապես անվտանգ օգտագործման նպատակով:

Ազրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման բնագավառում շահագրգիռ կողմերի համառոտ նկարագիր

Գենետիկ ռեսուրսները, այդ թվում մշակաբույսերի վայրի ցեղակիցների՝ ներառյալ վայրի ուտելի և կերային բույսերի հանդեպ հետաքրքրությունը մեր երկրում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով: Մի շարք գիտական և գիտափորձարարական կազմակերպություններ երկար տարիներ զբաղվում են ազրոկենսաբազմազանության ու վայրի ուտելի և կերային բույսերի ուսումնասիրությամբ և շատ դեպքերում ունեն գերմալազմայի սեփական հավաքածուներ <<in-situ>> կամ <<ex-situ>> պայմաններում, ինչպես նաև կուտակված և հիմնականում չհամակարգված տեղեկատվություն դրանց մասին: Նշված հաստատությունները մի կողմից հանդիսանում են սեփական հավաքածուների գենետիկ ռեսուրսների տրամադրողներ, մյուս կողմից՝ օգտագործողներ, քանի որ գիտական ուսումնասիրությունների կամ հավաքածուների ստեղծման համար օգտագործում են բնությունից կամ այլ աղբյուրներից ստացված գենետիկ նյութ:

Գենետիկ ռեսուրսներ տրամադրողները (պետական և մասնավոր սեկտոր) կազմում են շահառուների մի այլ խումբ, որոնց համար ռեսուրսների մատչելիության և շահույթի արդարացի բաշխման խնդիրն ունի առավել մեծ կարևորություն:

Գիտական և գենետիկական կազմակերպություններ

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են գենետիկ ռեսուրսների ուսումնասիրությանն առնչվող մի շարք գիտահետազոտական ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են ՀՀ կառավարության կողմից: Նման ծրագրեր հիմնականում իրականացվում են ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) և Հայաստանի Պետական Ագրարային Ակադեմիայի (ՀՊԱԱ) գիտական ինստիտուտների և կենտրոնների կողմից:

<<Հայաստանի կենսաբազմազանության կառավարման ինստիտուցիոնալ համակարգ>> բաժնում արդեն իսկ նշվել են գենետիկ ռեսուրսների հետազոտման կամ դրանց մասին տեղեկատվություն տրամադրող հիմնական կազմակերպությունները (պետական արգելոցներ և ազգային պարկեր, <<Հայանտատ>> ՊՈԱԿ, <<Անտառի գիտափորձարարական կենտրոն>>, <<Երկրագործության և բույսերի պաշտպանության>>, <<Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի>>, <<Խաղողապտղագինեգործական գիտական կենտրոններ>>, <<Սելեկցիոն նվաճումների պաշտպանության և սերմերի որակի պետական կենտրոն>>, <<Բույսերի գենետիկ ռեսուրսների լաբորատորիա>>):

ՀՀ ԳԱԱ համակարգում նման աշխատանքներ հիմնականում իրականացվում են Բուսաբանության ինստիտուտում, որտեղ պատրաստվել և հրատարակվել է <<Հայաստանի ֆլորա>> մենագրության 10-րդ հատորը՝ նվիրված Հայաստանի ֆլորայի տարբեր ընտանիքներին (տեսակային կազմ, տարածվածություն, կարգաբանություն և այլն): Այժմ մշակման փուլում է գտնվում 11-րդ հատորը: Ստեղծվում է Հայաստանի Կարմիր գրքի համակարգչային տվյալների բազան: Հետազոտվում է աբորիգեն դենդրոֆլորայի տարբեր կենսաէկոլոգիական և կարգաբանական խմբերի ներկայացուցիչների հարմարվողականության հնարավորություններ <<ex-situ>> պայմաններում՝ Հայաստանի դենդրոֆլորայի գենոֆոնդի պահպանության և վերարտադրության նպատակով: Ուսումնասիրվում են Հայաստանի տարբեր շրջանների բուսական պաշարների և օգտագործման ենթակա չափաքանակները: Ճշգրտվում են տարբեր էկոհամակարգերում էնդեմիկ բույսերի տեսակային կազմը, տարածվածությունը և ֆիտոցենոտիկ առանձնահատկությունները: Ուսումնասիրվում են Հայաստանի պտղատու տեսակների վայրի ցեղակիցները, որոնք մեծ արժեք են ներկայացնում գենոֆոնդի պահպանման համար:

<<Բուսաբանության ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի կազմում գործում է Բուսաբանական այգին իր երկու մասնաճյուղերով՝ Սևանում և Վանաձորում: Այստեղ՝ կենդանի հավաքածուներում, ներկայացված է Հայաստանի ՄՎՑ-ների մոտ 50 տեսակ:

ՀՀ ԳԱ Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտում մշակվում են մի շարք արժեքավոր և անհետացող դեղաբույսերի կենսատեխնոլոգիաները, ուսումնասիրվում են հիդրոպոնիկ մշակույթի մեջ ներմուծված բույսերի առանձնահատկությունները, ինչպես նաև մի շարք արժեքավոր ծառաթփատեսակների հատկանիշները <<in-situ>> պայմաններում՝ դրանց անհող արտադրության ֆիտոտեխնոլոգիաների մշակման նպատակով: Կատարվում են համեմատական հետազոտություններ մի շարք հիդրոպոնիկ և հողային բույսերի առանձնահատկությունների վերաբերյալ:

Գենետիկ ռեսուրսներ տրամադրողներ (պետական և մասնավոր սեկտոր)

Հայաստանում գենետիկ ռեսուրսների, այդ թվում ՄՎՑ-ների տրամադրումը այլ շահագրգիռ կողմերին կարող է տարբեր նպատակներ հետապնդել: Գիտական ինստիտուտները և գիտափորձարարական կազմակերպությունները, որոնք պահպանում են գերմպլազման տարբեր ձևի հավաքածուներում (սերմեր, հերբարիումներ, կենդանի կոլեկցիաներ. <<in-vitro>> հավաքածուներ) գենետիկ ռեսուրսները գիտական նպատակներով կարող են փոխանակել ազգային կամ միջազգային մակարդակներում գործող համանման աշխատանքներ իրականացնող այլ կազմակերպությունների հետ կամ վաճառել այն՝ ստացված շահույթը հետագայում ներդնելով հավաքված նյութի պահպանման և վերարտադրման համար: Խորհրդային կարգերի ժամանակ տպագրվում և տարածվում էին սերմերի կատալոգներ, որտեղ բերված էին ցուցակներ տարբեր գիտական ինստիտուտներում առկա հավաքածուների մասին: Դրանց հիման վրա գիտական հիմնարկների միջև կատարվում էր սերմերի անհատույց փոխանակում: Ցավոք այդ համակարգը ներկայումս չի գործում, ինչը խոչընդոտում է գենետիկ ռեսուրսների մասին տեղեկատվության փոխանակմանը:

Ֆերմերները և գյուղական տնտեսությունները, որոնք հողի սեփականաշնորհման արդյունքում դարձել են գենետիկ ռեսուրսների սեփականատերեր, տրամադրում են այդ ռեսուրսները չկանոնակարգված և անվերահսկելի ձևով՝ պարզ առք ու վաճառքի

սկզբունքով: Որպես կանոն, մասնավոր սեկտորը վատ է տեղեկացված գենետիկ ռեսուրսների իրական արժեքների, պահանջարկի և իրացման մեխանիզմների վերաբերյալ, որի պատճառով օգուտների արդարացի բաշխման գաղափարը ընդհանրապես չի կիրառվում:

Գենետիկ ռեսուրսներ օգտագործողները

Մեր հանրապետությունում գենետիկ ռեսուրսները օգտագործվում են տարբեր նպատակներով և բազմաբնույթ կարիքների համար՝ առանց գիտակցելու դրանց իրական արժեքը: Վերջին տասնամյակներում բոլոր հիմնական էկոհամակարգերը և լանդշաֆտային տիպերը ենթարկվում են ուժեղ մարդածին ճնշման և կենսառեսուրսների լայնամասշտաբ օգտագործման (անտառներ, արոտավայրեր, խոտհարքներ և այլն):

Հիմնական ՄՎՑ-ները օգտագործվում են սելեկցիոն գիտնականների կողմից, որոնք գենետիկական ռեսուրսները կիրառում են սելեկցիոն ծրագրերում՝ որպես ելակետային հումք: Անտառներում վայրի պտղատուների, այդ թվում նաև այլ ծառատեսակների օգտագործումը բնափայտ մթերոդ կազմակերպությունների կողմից իրականացվում է նույն սկզբունքներով և մեթոդներով: Այսինքն՝ պտղատու մշակովի բույսերի վայրի ցեղակիցները չեն արժեքավորվում որպես կարևոր և անփոխարինելի գենետիկական ռեսուրս, այլ գնահատվում է միայն դրանց բնափայտը:

Հասարակական կազմակերպությունները, որոնք աջակցում են տնկարանների և այգիների ստեղծմանը, ևս հանդիսանում են գենետիկական ռեսուրսների օգտագործողներ, իսկ սեփական բուսական ռեսուրսների առկայության դեպքում՝ գենետիկական նյութի տրամադրողներ:

Պահպանության ենթակա բույսերի ագրոկենսաբանական առանձնահատկությունները և դրանց կիրառման (օգտագործման) նպատակներն ու ձևերը

Հացազգիներ *Triticum L. Ցորեն*



Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են մշակովի և վայրի ցորենի 13 տեսակներ և ավելի քան 360 տարատեսակներ:

Սակայն շրջանառությունից հնադավ տեղական սորտերի դուրս գալու հետ կորչում են նաև դրանց արժեքավոր տարատեսակներն ու ձևերը, որոնք մեծ կարևորություն ունեն սելեկցիոն աշխատանքներում:

Այս իրավիճակը հացազգիների գենոֆոնդի պահպանության գերխնդիր է դնում ինչպես մշակովի այնպես էլ վայրի ցեղակիցների անվերադարձ կորուստը կանխելու համար:

Հայաստանում հայտնաբերված վայրի ցորենների տեսակներն ունեն շատ հետաքրքրական առանձնահատկություններ:

T.boeoticum Boiss - Ցորեն միհատիկ

Այս տեսակը բաժանվում է երկու ենթատեսակի՝

- a) *subsp.boeoticum-վայրի միաքիստ, միհատիկ* - հասկի մեջ յուրաքանչյուր հասկիկ կրում է մեկ քիստ, որը սովորաբար կարճացած է (առաջին ծաղկի քիստի կեսից պակաս)
- b) *subsp.thaoudar Reut, ex Hausskn.-վայրի երկքիստ, միհատիկ* - հասկի մեջ յուրաքանչյուր հասկիկ կրում է երկու քիստ, ընդ որում երկրորդն ունի համարյա նույն երկարությունը, ինչ առաջինը: Սակայն կտրուկ սահման երկքիստի և միաքիստի միջև գրեթե չկա, քանի որ հանդիպում են նաև միջանկյալ ձևեր: Գլխավոր վտանգը այս տեսակի ոչնչացումն է, դրա աճելավայրերում հողերի մելիորատիվ և ինտենսիվ երկրագործության հետևանքով:

T.urartu Thum. ex Gandil – Վայրի ցորեն ուրարտու

Մինչ այժմ տեսակը էնդեմիկ էր համարվում Հայաստանի համար: Այս տեսակի միակ աճելավայրը համարվում է Գեղաղիր, Ողջաբերդ, Ջրվեժ գյուղերի տարածքը: Վերջերս **T.urartu** է հայտնաբերվել նաև Հայաստանի մերձակա երկրների տարածքներում (Իրան, Թուրքիա, Լիբանան): Այս տեսակը մեծ հետաքրքրություն է առաջ բերել գիտնականների շրջանում: Ոմանք գտնում են, որ հենց ուրարտու վայրի ցորենն է առաջին գենոմի (գենոմ A) դոնորը, որը լայնորեն տարածված է տետրապլոիդ և հեքսապլոիդ ցորենի մեջ, իսկ ամերիկացի գենետիկ B.Lennart Johnson-ը հաստատում է, որ այս ցորենը կարծր և փափուկ ցորենների B գենոմի դոնորն է: Ներկայումս հաստատված են 6 տարատեսակներ, սակայն նոր գիտական տվյալները կարող են նոր լույս սփռել ուրարտու վայրի ցորենի առանձնահատկությունների վրա, հետևաբար դրա պահպանումը համաշխարհային կարևոր խնդիր է:

T.araraticum Jakibz. – Վայրի ցորեն արարատյան, վայրի երկհատիկ ցորեն, վայրի հաճար

Հայաստանում այս տեսակի և *T.boeoticum*-ի տարածման արելաները համընկնում են: Շատ հետաքրքիր տեսակ է, որը համարվում է ցիտոպլազմատիկ արական ստերիլության աղբյուր: Առանձնացված են արարատյան ցորենի 10 տարատեսակներ:

Հայաստանում հանդիպող վայրի ցորենի՝ վերևում հիշատակված երեք տեսակներն էլ ունեն մեծ գենետիկ նշանակություն: Առաջին հերթին, դրանք մշակովի ցորենների հետ տրամախաչման առումով խիստ արժեքավոր սելեկցիոն նյութ են հանդիսանում տեսական և գործնական տեսակետից, հետևաբար կարիք ունեն պահպանման: Այս առումով <<Էրեբունի>> պետական արգելոցի ստեղծումը Գեղաղիր և Շորբուլաղ գյուղերի միջև, որտեղ հանդիպում են հիշատակված բոլոր տեսակները, իրենց ներտեսակային մեծ պոլիմորֆիզով հանդերձ, լուծում է այդ համաշխարհային խնդիրը:

Hordeum - Գարի

Չնայած Հայաստանի տարբեր մարզերում դեռևս պահպանվում են գարու հնամշակ տեղական սորտ-պոպուլյացիաները, սակայն դրանց ցանքատարածքների կրճատման արդյունքում նվազում է նաև մշակովի գարու գենոֆոնդը:

Գարու վայրի հայաստանյան տեսակների և դրանց ներտեսակային մեծ բազմազանությունը մինչև վերջ ուսումնասիրված չեն: Դրանք որպես կանոն օգտագործվում են որպես կերային բույսեր, չնայած որ ունեն նաև սելեկցիոն մեծ նշանակություն: Հայաստանում տարածված տեսակներն են՝

H.glaucum Steud. - *Գարի կապտականաչ* - Հանդիպում են ծովի մակարդակից 700-2200 մետր բարձրություններում: Ունեն տարբեր ձևեր, որոնք միմյանցից տարբերվում են հասկի գույնով և այլ հատկանիշներով:

H.murinum s. l. - *Մկնագարի* - Հանդիպում է *H.glaucum*-ի տարածման արեալներում: Տարբեր առանձնյակների ցիտոլոգիական ուսումնասիրություններով պարզվել է, որ այստեղ առկա է հեքսապլոիդ ռասա ($2n=42$): Այն պրոֆ. Պ.Ղանդիլյանի կողմից առանձնացվել է որպես առանձին տեսակ *H.hrasdanicum Gangil.* (առաջին անգամ հայտնաբերվել է Հրազդան գետի կիրճում):

H.geniculatum All - *Գարի ծնկաձև* - Տարածված է հիմնականում ցածրավայրերում, նախալեռնային գոտում՝ բարձրանալով մինչև 1600 մետր բարձրություններ: Հանդիպում են բույսեր 702սմ բարձրությամբ, չնայած բնութագրական են համարվում ցողունների 10-20սմ բարձրությունը և հատիկների կանաչավուն երանգը:

H.maritimum With. - *Գարի ծովային* - Հանդիպում է նույն տարածքներում, ինչպես որ նախորդ տեսակները:

H.violaceum Boiss. Et Huet - *Գարի մանուշակագույն* - Համարվում է խոնավ մարգագետիններին բնորոշ բույս: Գերազանց կերային բույս է: Կան էկոլոգիական ձևեր, որոնք մինչև վերջ ուսումնասիրված չեն:

H.bulbosum L. - *Գարի սոխուկավոր* - Լայնորեն տարածված (ծովի մակարդակից 700-2200 մետր բարձրություններում): Հայ ժողովրդի մեջ հայտնի է որպես «սոխուկավոր տարեկան», որոշ վայրերում դրա սոխուկները օգտագործում են սննդի մեջ: Առանձին վայրերում հանդիպում են էկոլոգիական տարբեր ձևեր, որոնց ցողունների բարձրությունը գերազանցում է 2 մետրը: Շատ են հանդիպում սպիտակահասկ և կարմրահասկ տարատեսակներ: Այս տեսակն արժեքավոր սելեկցիոն նշանակություն ունի:

H.spontaneum C.Koch. - *Գարի վայրի, երկշաքք* - Մշակովի գարին ֆիլոգենետիկ ուսումնասիրության առումով մեծ նշանակություն ունի: Հայաստանում այն առանձին կղզյակներով աճում է Երևանի շրջակայքում, առանձին բույսեր են հանդիպում Նոյեմբերյանում և Մեղրու տարածքում (Շվանիձորի և Ալդարայի խաղողի այգիներում):

Այս տեսակը մեծ արժեք է ներկայացնում պրակտիկ սելեկցիայի տեսակետից: Հայկական ձևերի մեջ կան տիպիկ ձմեռադիմացկուն բույսեր, որոնք կարող են կիրառվել տիպիկ աշնանացան, ձմեռադիմացկուն գարու սորտեր ստանալիս: Այն ունի ժողովրդատնտեսական մեծ նշանակություն:



Aegilops L. Այծակն քարախոտ

Հայաստանի Հանրապետության տարածքը համընկնում է Aegilops-ի արելաների կենտրոնական հատվածի հետ: Դրանք առավելապես հանդիպում են վայրի գորենի տարածման արելաներում, որտեղ էլ կարելի է համատեղ լուծել պահպանման խնդիրը:

Aegilops-ների վերջին ժամանակների մեծ հետաքրքրությունը պայմանավորված է տետրապլոիդ և հեքսապլոիդ գորենների առաջացման գործում դրանց ունեցած դերի վերաբերյալ ցիտոլոգիական ապացույցներով: Այս առումով աճում է ցեղի նկատմամբ տեսական հետաքրքրությունը և պրակտիկ գենետիկասելեկցիոն նշանակությունը: Այդ պատճառով էլ բարձրանում է պահպանության խնդիրը:

Առավել կարևոր են Հայաստանում հանդիպող այծակնի հետևյալ տեսակները՝

***A. tauschii* Cosson (*A. squarrosa* auct. non L.) - Այծակն Թաուշի** - Հանդիսանում է հեքսապլոիդ գորենի D գենոմի դոնոր: Հայաստանում հանդիպում է ծովի մակարդակից 1700-1800 մետր բարձրություններում, որտեղ հատկապես լինում են փոքր հասկերով ձևերը - ssp. tauschii և խոշոր հասկակիր ձևերը - ssp. strangulate Eig.: Հանդիպում են այս տեսակի և մշակովի գորենի սպոնտան խաչասերման դեպքեր:

***A. cylindrical* Host. - Այծակն գլանաձև** - Հայաստանում այն հանդիպում է էգիլոպսների ամբողջ արեալներում: Առանձին դեպքերում բարձրանում է մինչև 1900 մետր բարձրությունները: Համատարած բուսուտներ է առաջացնում նախալեռնային շրջաններում: Համարվում է հեքսապլոիդ գորենի D գենոմի դոնորը (գենոմային ֆորմուլը-CD):

Բնության մեջ հաճախակի է հանդիպում սպոնտան խաչասերումներ մշակովի գորենների հետ:

***A. triuncialis* L. - Այծակն եռմատնյա** - Համարվում է էգիլոպսների ամենապոլիմորֆ տեսակը Հայաստանում, հանդիպում է դրա ամբողջ արեալում: Նույնպես սպոնտան ձևով խաչասերվում է մշակովի գորենների հետ:

***A. biuncialis* Vis. (*A. lorentii* Hochs) - Այծակն երկմատնյա** - Այնքան էլ տարածված չէ, ավելի հաճախ կարելի է գտնել ՀՀ Արարատի մարզի Չիման և Լանջանիստ գյուղերի շրջակայքում, որտեղ և աճում են վայրի գորեններ:

***A. triaristata* Willd - Այծակն եռաքիստ** - Բուսուտներ են հայտնաբերվել առավել հաճախ Կապանի և Գորիսի տարածքներում:

***A. columnaris* Zhuk. - Այծակն սյունավոր** - Տարածված են Հայաստանի կենտրոնական գոտու նախալեռնային շրջաններում, ինչպես նաև երբեմն Գորիսի և Մեղրու տարածքներում: Արագ վերանում է տարածման արեալներում տնտեսական գործունեության պատճառով:

***A. crassa* Boiss. Ssp. *vavilovii* Zhuk. - Այծակն Վավիլովի, հաստ** - Ներկայումս խիստ հազվադեպ հանդիպում է Երևանի շրջակայքում, հիմնականում վայրի գարու և էգիլոպսի այլ տեսակների հետ: Նկատվում է սպոնտան խաչասերման և ստերիլ հիբրիդների առաջացման դեպքեր փափուկ գորենի (*T. aestivum*) հետ: Այս տեսակը ևս համարվում է



հեքսապլոիդ ցորենի D գենոմի դոնորը (գենոմային ֆորմուլան՝ DDM): Կա վերացման վտանգ:

Amblyopyrum muticum (Boiss.) Eig. *A. muticum* - *Բթաթեփուկ անքիստ* - Պրոֆ. Պ.Ղանդիլյանի կողմից առանձնացվել է 8 տարատեսակներ: Դրա միակ տարածման արեալը՝ Ջրվեժ, Ողջաբերդ և Շորբուլաղ գյուղերի շրջակայքում ենթարկվել է մելիորիացիայի և միակ վայրը որտեղ կարելի է գտնել այս տեսակին պատկանող բույսերից դա <<Էրեբունի>> արգելոցն է: Այն հետաքրքիր է նաև դրանով, որ համարվում է տետրապլոիդ և հեքսապլոիդ ցորենի B գենոմի դոնորը:

Secale L. Աշորա, տարեկան



Հայաստանում քիչ է մշակվում, չնայած դրա (S.cereale) միամյա դաշտամուլախոտային ձևերը նախալեռնային և լեռնային գոտու հացահատիկային բույսերի ցանքերում հաճախ են հանդիպում: Նկատելի է աշորայի չտեսնված բազմաձևություն, սակայն տարեցտարի դրանց քանակը կրճատվում է:

Հայաստանը հարուստ է աշորայի նաև վայրի տեսակներով՝

S.vavilovi Grossh. - *Աշորա Վավիլովի, վայրի միամյա*

աշորա - Այս տեսակին են պատկանում վայրի աշորայի կոտրվող հասկիկներով միամյա ձևերը: Բույսի բարձրության, հասկի մեծության և հաբիտուսային այլ հատկանիշներով սրանք առաջացնում են մեծ վարիացիաներ: Տարատեսակների քանակը հասնում է 26-ի, որոնց մեջ հաճախ հանդիպում են սելեկցիոն տեսակետից հետաքրքիր ձևեր, որոնց պահպանությունը կարևոր է: Ավելի հաճախ սրանց բույսերը նախալեռնային գոտու պայմաններում աղբոտում են մշակովի ցորենի ու գարու ցանքերը:

S.montanum Guss. s.l. - Աշորա լեռնային, վայրի բազմամյա աշորա - Վայրի աշորայի բազմամյա ձևերը հիմնականում Հայաստանում տարածված են ծովի մակարդակից 700-2200 մետր բարձրություններում:

Որոշ վայրերի մեկուսացվածությունը և միկրոէկոլոգիան ազդել են բազմամյա աշորայի ձևաառաջացման վրա: *S.montanum*-ի որոշ ձևեր հանդիպում են մեկուսացված կղզյակներով այնպիսի վայրերում, որտեղ խոտհունձ կամ արածեցումներ չեն կատարվում:

Շատ կարևոր է դրա մասիվ աճելավայրերում՝ Ծաղկաձորում, Գեղարդում, Ջերմուկում (առկա են բազմաթիվ ձևեր), պետք է զբաղվել դրանց պահպանության խնդիրներով:

Ընդավորներ

Onobrychis adans. Կորնգան



Հայաստանում կորնգանը մշակվում է անհիշելի ժամանակներից: Դարեր շարունակ այն աճեցվել է բնական առանձնահատուկ պայմաններում, որը գոյատևման պայքարի և բնական սելեկցիայի յուրահատուկ ճանապարհ է անցել, արդյունքում ձևավորելով տնտեսական և կենսաբանական

արժեքավոր հատկանիշներով օժտված տեղական սորտ-պոպուլյացիաներ:

Հայաստանի տարածքը հարուստ է նաև կորնգանի վայրի տեսակներով, որոնց թիվը հասնում է 21-ի: Դրանցից կիրառական հետաքրքրություն և նշանակություն ունեն ու լայնորեն տարածված են հետևյալ տեսակները:

O. transcaucasica Grossh. - *Կորնգան անդրկովկասյան* - Համարվում է կերային հնագույն բուսատեսակներից մեկը Հայաստանում: Աճում է վայրի ձևով ամենուրեք, հայտնի են տարատեսակ պոպուլյացիաներ, խիստ պոլիմորֆ տեսակ է:

O. altissima Grossh. - *Կորնգան ամենաբարձր* - Հայտնի է իր շատ բարձր ցողուններով, նույնպես լայն տարածում ունի և երբեմն այն շփոթում են մշակովի կորնգանի հետ:

Տարածված են նաև կորնգանի հետևյալ վայրի տեսակները՝ *O. hajastana Grossh.* - *Կորնգան Հայաստանի*, *O. cadmea Boiss.* - *Կորնգան կադմեյական*, *O. oxytropoides Bunge* - *Կորնգան սրանավակ*:

Մշակովի կորնգանին (*O. antasiatica A. Khintch*) ամենամոտն իրենց կենսաբանական և մորֆոլոգիական հատկանիշներով կանգնած են վերևում հիշատակված առաջին երկու վայրի տեսակները, դրա համար էլ ընդունված է, որ Հայաստանի մշակովի կորնգանը ծագել է այս երկու տեսակներից: Այժմ էլ երբեմն դրանց, իրենց բնական աճելավայրերում շատ հեշտությամբ կարելի է շփոթել: Ոչ միայն մորֆոլոգիական, այլև կենսաբանական առանձնահատկություններով՝ վաղահասությամբ, ձմեռադիմացկունությամբ, չորադիմացկունությամբ կորնգանի հիշյալ երեք տեսակները (մշակովի և երկու վայրի) համարյա չեն տարբերվում: Դեռ ավելին, նույնիսկ քիմիական կազմի համադրմամբ մեծ տարբերություններ հնարավոր չէ գտնել: Ավելի հետաքրքիր փաստ է այն, որ կորնգանի մշակովի և վայրի երկու տեսակների բույսերին մեծ վնաս պատճառող «կորնգանի ծաղկային մոծակ»-ը նույն վայրերում աճող կորնգանի մյուս վայրի տեսակներին՝ *O. cadmea Boiss.*, *O. oxytropoides Bunge*, *O. vaginalis CAM.*, *O. Biebersteinii G. Sir.* չի վնասում:

Հավանաբար, *O. transcaucasica Grossh.*, *O. altissima Grossh* և *O. antasiatica A. Khintch*. տեսակները կարելի է ընդունել որպես մեկ տեսակ իր երեք և ավելի ձևերով, որոնցից մեկը դարեր շարունակ կուլտուրականացվել է՝ ստանալով ներկայիս արտադրատնտեսական բնութագիրը:

Կորնգանի մնացած վայրի տեսակները ևս ներկայացնում են որոշակի հետաքրքրություն, որոնց պահպանությունը և կոլեկցիայի ստեղծումը կարևոր միջազգային խնդիր է:

Medicago L. Աովույտ



Հայաստանում աովույտը մշակվում է հնագույն ժամանակներից: Հայաստանում առավել քան հայտնի են աովույտի հետևյալ տեսակները՝

M. sativa L. - *Աովույտ ցանովի կամ կապույտ, սովորական* - Բազմամյա բույս է, հայտնի են սրա բազմաթիվ ձևերը, որոնք իրարից տարբերվում են ինչպես կենսաբանական, այնպես էլ բուսաբանական և տնտեսական հատկանիշներով: Հանդիպում է գրեթե բոլոր շրջաններում, տարբեր բարձրություններում և ամենատարբեր էկոլոգիական պայմաններում: Դրա համար էլ երբեմն այդ տարբեր էկոտիպերին տեսակային և ներտեսակային

տակսոնոմիական միավորներ են տրվում: Դրանցից շատերը և մշակվում են, և հանդիպում վայրի վիճակում: Ամենատարածվածը Ապարանի տեղական պոպուլյացիան է (Հայաստան), որը իրեն շատ լավ է դրսևորում Հայաստանի գրեթե բոլոր մարզերում: Այն ցրտադիմացկուն է, բարձր բերքատու, կարելի է մեկ տարվա մեջ 3-5 անգամ հնձել: Ագրոնոմիական տեսակետից հետաքրքրություն ունեն նաև Զանգեզուրի պոպուլյացիաները:

M. falcata L. - *Առվույտ մանգաղանման կամ դեղին* - Բազմամյա բույս է, համեմատաբար մանր տերևիկներով: Սովորական կամ կապույտ առվույտի համեմատությամբ այն աչքի է ընկնում չորադիմացկունությամբ և ձմեռադիմացկունությամբ, առավել աղադիմացկուն է: Այն շատ դանդաղ է աճում և զարգանում, առաջին տարում չի ծաղկում: Հանդիպում է ավելի հաճախ վայրի ձևով: Մշակության մեջ քիչ է հայտնի:

Բացի այդ, Հայաստանում վայրի ձևով աճում են նաև առվույտի հետևյալ տեսակները՝ *M. coerulea* Lenss., *M. lupulina L.*, *M. x varia* Matyn, *M. polychroa* Grossh., *M. papillosa* Boiss., *M. orbicularis (L.) Bartalini.*, *M. truncatula* Gaertn., *M. rigidula (L.) All.*, *M. minima (L.) Bartalini*:

Trifolium L. Երեքնուկ, խնձորածաղիկ



Հայաստանի տարածքում աճում են երեքնուկի շուրջ 30 վայրի տեսակներ, որոնցից առվել կարևորներն են և մեծ նշանակություն ունեն *T. sebastianii* Savi. - *Ե. սեբաստիանի*, *T. pratense L.* - *Ե. կարմիր, մարգագետնային*, *T. hybridum L.* - *Ե. վարդագույն, հիբրիդային*, *T. repens L.* - *Ե. սողացող, սպիտակ*, *T. ambiguum* Bieb. տեսակները: Դրանք լայնորեն տարածված են, երբեմն նույնիսկ որոշ տեղերում մշակվում են: Սակայն կոլեկցիոն ցանքերի ստեղծումը կարևոր է, հետագայում սելեկցիայում օգտագործելու նպատակով:

Vicia L. Վիկ, գյուլուլ

Վիկը կարևորագույն կերային բույս է, որի շուրջ 40 տեսակներ աճում են Հայաստանում: Սակայն դրանցից պահպանության ենթակա են.

V. vilosa Roth *Վիկ թավուտ, վիկ աշնան*: Շատ պոլիմորֆ և լայն տարածում ունեցող տեսակ է: Այս տեսակին է պատկանում երկհար ձևը, ուրն ունի տնտեսական մեծ նշանակություն և հետաքրքրություն նաև գիտական տեսակետից:

V. ervilia (L.) Willd *վիկ համրիչանման, քուռուշնա, ֆրանսիական վիկ*: Հանդիպում է վայրի ձևով, որպես դաշտամոլախոտային, իսկ որոշ տեղերում նաև ցանվում է: Այս տեսակը համարվում է սովորական ոսպի ուղեկիցը, ինչպես նաև հանդիպում է այլ բույսերի ցանքերում: Սա շատ արժեքավոր բույս է, հարուստ սպիտակուցներով, չորադիմացկուն է,



պահանջկոտ չէ հողի սննդատարրերի նկատմամբ, ընդհակառակը հողը հարստացնում է ազոտով: Աչքի է ընկնում իր բազմաձևությամբ:

V.cappadocica Bios. & Bal. *վիկ կապադոնիական* - Սա ևս ունի որոշակի հետաքրքրություն:

Cicer L. Միսեռ

Հայաստանում սիսեռը հնագույն մշակաբույս է, այստեղ հանդիպում են մշակովի սիսեռի (*C.arietinum* L.) աշխարհագրական տարբեր խմբերին պատկանող ձևեր: Միայն տարատեսակների քանակը հաշվում է 51, բացի դրանից նշվում են ըստ էկոտիպերի ևս մի քանի տասնյակ ձևեր, որոնք բնութագրվում են սերմի ձևով, գույնով և այլն: Սերմերի ձևը խիստ փոփոխական է: Չորային պայմաններում սիսեռի սերմերի հիմնական մասն անկյունավոր է, հաստ մաշկով, խոնավ պայմաններում՝ ոլորտանման, բարակ մաշկով: Հայաստանի տեղական սիսեռները խիստ բազմազան են, շատերն էնդեմիկ են և սելեկցիայի համար որպես ելանյութ մեծ արժեք են ներկայացնում:



Ցավոք, ներկայումս սիսեռի տեղական ձևերը մշակության մեջ ավելի հազվադեպ են հանդիպում:

Հայաստանում աճում են նաև սիսեռի վայրի տեսակները (*C.minutum* Boiss. et Hohen li *C. anatolicum* Alef), որոնք ևս հաստատում են, որ այս տարածաշրջանը պետք է ընդունել որպես սիսեռի ծագումնաբանական և ձևառաջացման կենտրոններից մեկը: *C. anatolicum* հազվագյուտ տեսակ է, որը հանդիպում է մեկուսացված վայրերում՝ Խոսրովի պետական արգելոցում, Դարալագյազի և Մեղրու ֆլորիստական շրջաններում: *C. minutum* Boiss-ը նույնպես հազվագյուտ տեսակ է, ունի գիտական մեծ նշանակություն, աճում է Դարալագյազի ալպիական գոտու եզրերին: Խնդիրը դարձյալ այս հարուստ գենոֆոնդի պահպանումն է և օգտագործումը:

Pisum L. Ոլոռ



Հայաստանում ոլոռի մասին հիշատակումները շատ վաղ պատմություն ունեն: Դրանց մասին են գրել V դարի պատմիչ Ագաթանգեղոսը, XII դարի առակագիր Մխիթար Գոշը:

Մշակության մեջ հայտնի է *Pisum sativum* L. տեսակը, որն ունի երկու ենթատեսակներ՝ *ssp. sativum* - *սովորական ոլոռ* և *ssp. arvense* - *դաշտոլոռ*: Հայաստանում վաղուց հայտնի են եղել ոլոռի բազմաթիվ հետաքրքիր և հին սորտ-պոպուլյացիաները, որոնք մինչև այժմ էլ որոշ վայրերում շարունակում են մշակվել: Խիստ հետաքրքրական են դաշտամոլախոտային ոլոռի ձևերը, որոնք երբեմն բերվում են որպես առանձին տեսակ՝ *P. arvense* (*P. sativum* conv. *Speciosum* (Dierb) Alef) – *ոլոռ դաշտային, դաշտոլոռ, գյուլով*:

Առանձին բույսեր հանդիպում են ցորենի և գարու տեղական սորտերի ցանքերում: Մշակության մեջ դրանց տարածքների աստիճանական նվազումը, որը անվերադարձորեն շարունակվում է նաև այժմ, կարող է պատճառ դառնալ նաև ոլոռի վերացմանը:

Հետևաբար, դրանց համատեղ պահպանությունը կարևոր խնդիր է: Դրանք բնութագրվում են սերմերի ձևով և ծաղիկների գունավորմամբ, որոնցով շատ են նմանվում մշակովի ոլոռի Զանգեզուրի տեղական սորտերին: Հայաստանում տարածված են նաև վայրի ոլոռի այլ տեսակներ (*P. elaticum* Bied – *ոլոռ լեռնային* և *Vavilova Formosa* (Stev.) Fed. – *Վավիլովայի նրբագեղ*): Սրանք ևս ունեն սելեկցիոն նշանակություն:

Lens Mill. Ոսպ, մարչմախ

Հայաստանում մշակովի ոսպը մշակվում է ինչպես հարթավայրերում, այնպես էլ նախալեռնային և լեռնային գոտում՝ մինչև 2100 մետր բարձրությունները: Հայտնի են ոսպի տեսական սորտերի տարատեսակային մեծ բազմազանություն: Հայկական ոսպերն աչքի են ընկնում իրենց չորադիմացկունությամբ: Սակայն հնադավ այդ սորտերը այսօր ոչնչացման վտանգի տակ են: Ոսպի վայրի տեսակներից Հայաստանում հանդիպում են *L.orientalis* (Boiss.) Hand. Mazz – *ոսպ արևելյանը*, որը շատ հազվադեպ հանդիպող տեսակ է: Հանդիպում է Դարալագյազում, Արարատում և Մեղրիում, չոր, քարքարոտ կիսաանապատային տարածքներում:



L. ervoides (Boiss.) Grande – *ոսպ ոսպնյականմանը*, առավել քան հազվագյուտ տեսակ է, միակ աճելավայրը Զանգեզուրն

է (Կապանի շրջակայքում), որտեղ ոչնչացման վտանգ կա: Երկուսն էլ գիտական, սելեկցիոն մեծ նշանակություն ունեն և պահպանության մեծ կարիք են զգում:

Բանջարաբոստանայիններ

Spinacia L. Սպանախ

Բացի սպանախի մշակովի տեսակից (*S.oleracea* L.), որն ունի բազմաթիվ սորտեր, որոնք երբեմն նաև աճում են վայրի ձևով, Հայաստանում հանդիպում է նաև սպանախի վայրի տեսակը, որը կարող է սելեկցիոն մեծ նշանակություն ունենալ:

S. tetrandra Stev. – *Սպանախ քառաւնդ*: Հազվագյուտ տեսակ է, գտնվում է ոչնչացման եզրին: Հանդիպում է քարքարոտ վայրերում, կավային լանջերին, նախալեռներում և ներքին լեռնային գոտում՝ 800-1400 մետր բարձրություններում, վայրի ցորենների հետ: Հայաստանում սպանախի տարածման արելաները հիմնականում ընդգրկում են Երևան քաղաքի հյուսիս-արևելյան շրջակայքը (Ջրվեժ, Էրեբունի պետական արգելոց), ինչպես



նաև Արարտյան դաշտի մի շարք բնակատեղեր (Խոր-Վիրապ, գ. Սովետաշեն, գ. Արմաշ-Արարատի մարզ):

S. tetrandra Stev.-ի բույսերն ունեն 10-40սմ բարձրություն, մերկ են, միամյա և երկտուն: Ունեն գիտական և սելեկցիոն նշանակություն:

Իգական բույսերի ծաղիկները բեղմնավորվելուց հետո սերտաճելով միմյանց, երբեմն նաև տերևաթիթեղի հիմքի հետ, կազմում են կնձիկներ:

Դրանք հասունանալիս փայտանում են, ունեն նաև փշանման սուր ելուստներ:

Դիտարկումներից պարզվել է, որ մինչև այժմ էլ Հայաստանում /հատկապես այն շրջաններում, որտեղ հանդիպում է վայրի սպանախը/ մարդիկ օգտագործում են այն սննդի մեր որպես վաղ գարնանային տերևաբանջար:

Daucus L. Գազար

Բացի գազարի (*D. carota* L. - *Վայրի գազար*) տեսակին պատկանող մշակովի սորտերից Հայաստանում հանդիպում են դրա վայրի ձևերը, որոնք այստեղ ունեն այլ անուն <<գյազրուկ>>:

Գազարի վայրի բույսերը միամյաներ են և աչքի են ընկնում իրենց բարակ, պինդ, ամուր արմատներով, այն դեպքում, երբ մշակովի գազարի բույսերը երկամյա են: Ընդ որում, արևելյան ենթատեսակը (*ssp. orientalis Rubass*) Հայաստանում հանդիպում է գրեթե ամենուրեք, իսկ հյուսիս-արևմտյան շրջաններում (ՀՀ Տավուշի մարզ) հայտնաբերվել են նաև արևմտյան ենթատեսակը (*ssp. occidentalis Rubass*):



Երկու ենթատեսակներն էլ աճում են որպես դաշտամուլախոտեր՝ ճանապարհների եզրերին, խաղողի այգիներում, բանջարանոցներում, անտառային բացատներում, հեղեղատներում և գետափերին: Աճում են կամ միայնակ, կամ խմբերով, երբեմն էլ առաջացնում են բուսուտներ: Դրանք հանդիպում են ինչպես ցածրավայրերում, այնպես էլ բարձրավայրերում: Սրանց մոտ նկատելի է որոշակի

պոլիմորֆիզմ:

Ժողովուրդը վայրի գազարն օգտագործում է շատ վաղ ժամանակներից՝ մսի և ձկան կերակրատեսակներում որպես համեմունք, ինչպես նաև մարինադների և օդու արտադրությունում: Ձկան, մսի վերամշակման ժամանակ վայրի գազարի պտուղների օգտագործումը պահպանում է դրանց արտաքին տեսքը, տալիս հաճելի, յուրահատուկ հոտ և համ:

Վայրի գազարի պտուղներն օգտագործում են նաև որպես միզամուղ, ինչպես նաև միզածորանի և երիկամների աշխատանքի նորմալացմանը նպաստող, որպես դիարետիկ, ինչպես նաև մենստրուացիա առաջացնող:

Հայաստանում վայրի գազարը կամ ժողովրդի մեջ հայտնի գյազրուկը, օգտագործվում է նաև որպես վաղ գարնանային <<կանաչ բանջար>>, խաշած և տապակած ձևով:

Asparagus L. Ծնեբեկ

Հայաստանում ծնեբեկի *A. Officinalis* L. (*Ծնեբեկ դեղագործական, սովորական*) տեսակը, որին պատկանում են մշակովի սորտերը, աճում է վայրի վիճակում թփուտներում, խոտածածկ լեռնալանջերին, այգիներում, գետերի ավազոտ և տիղմոտ ափերին, գրեթե ամենուրեք: Այն օգտագործվել է սննդի մեջ շատ վաղուց մինչև մշակութային մեջ հայտնի լինելը և ունի



ժողովրդական անվանումներ՝ մարածո, ծնեփակ և այլն:

Դրանք կոճղարմատավոր բույսեր են, ցողունի բարձրությունը 120-150սմ, ծաղիկները մանր են, բաց-կանաչավուն, երբեմն դեղնավուն, փոշոտումը խաչաձև է: Պտուղը գնդաձև, հասունացման ժամանակ՝ կարմիր: Ծնեբեկը որպես դեղաբույս օգտագործվել է հնագույն և միջնադարյան բժշկության մեջ: Հայ միջնադարյան հոչակավոր բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացին իր դեղագործական գրքում նշում է այդ բույսերի անունը և դրա բուժական հատկությունը: Ամենամեծ կիրառություն ունեցել են դրա արմատները:

Բացի *A. Officinalis* - ից հանդիպում են ծնեբեկի ևս 6 տեսակ, որոնցից հատկապես ուշադրության են արժանի *A. verticillatus L.* - *Ծնեբեկ օղակաձև*, *A. persicus Baker* - *Ծնեբեկ պարսկական* վայրի տեսակները: Սրանք մինչև վերջ լավ ուսումնասիրված չեն, սակայն ունեն սելեկցիոն տեսակետից մեծ նշանակություն նոր սորտեր ստանալու առումով:

Chenopodium L. Թելուկ, սագախոտ



Հայաստանում հայտնի են թելուկի 10-11 տեսակ: Դրանք հիմնականում շատ են տարածված Արարատյան հարթավայրում, ձորակներում, ավազախառն հողերում, աղբավայրերում և չոր լանջերում:

Միամյա, երբեմն երկամյա խոտաբույսեր են: Առավել լայն տարածում ունի *Chenopodium album L.* - *Թելուկ սպիտակը*, որը միամյա մոլախոտ է, հանդիպում է բանջարանոցներում, հացազգիների ցանքերում, անասունների համար ունի կերային նշանակություն,

տերևներն ու երիտասարդ ընձյուղներն օգտագործվում են աղցանների, ապուրների մեջ: Այն օգտագործվում է որպես դեղաբույս, շնորհիվ իր խենոպոդիումային յուղի՝ լավ ազդեցություն ունի ճիճվաթափության դեմ:

Հայաստանում տարածված է նաև *Ch. vulvaricaul* - *գարշահոտ թելուկը*, ցածրադիր գոտու հացաբույսների ցանքերում, որպես մոլախոտ, *Ch. hybridum* - *Խառնածին թելուկը*, թունավոր է, և աղբոտում է լեռնային հացազգիների ցանքերը, *Ch. glaucum* - *գորշ թելուկը*, որն աճում է ամենուրեք:

Beta L. Ճակնդեղ



Հայաստանում ճակնդեղի տեղական պոպուլյացիաները շատ բազմազան են: Դրանց համար ընդհանուր բնութագրիչ է հին ձևերի ընդհանրությունը, որն արտահայտում է կարճացած և կլորավուն տեսք ստացած արմատապտուղով:

Բացի մշակովի ճակնդեղից (*B. vulgaris L.* - *Ճակնդեղ սովորական*) Հայաստանում աճում են նաև ճակնդեղի վայրի երեք տեսակներ.

Beta macrorrhiza Stev. - *Ճակնդեղ խոշորաբլիս* - Պոպուլյացիան ունի կտրված-բաժանված արեալներ: Հայաստանի Հանրապետությունում *B. macrorrhiza* Stev.- ի բուսուտներ են հայտնաբերվել Սելիմի լեռնանցքում և Գլաձորի շրջակայքում (ՀՀ Վայոց Ձորի մարզ), Գյումրիից Սպիտակ ճանապարհահատվածում և Սևանա լճի շրջանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ):

Բազմակի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս տեսակի պոպուլյացիան բարձր լեռնային գոտու համար (ծովի մակարդակից 2000-2200 մետր բարձրություն) տիպիկ դաշտամուլախոտ է: Բազմամյա է, շատ խոշոր արմատապտուղներով՝ 5-10կգ քաշով, 8-15սմ տրամագծով, որը հողի մեջ խորանում է մինչև 1,5մ և ավելի: Սերմերը կնձիկային կառուցվածք ունեն:

Beta lomatogona F.et M. (*B.lonespicata* Mog) - *Ճակնդեղ բաժանապտուղ*:

Պոպուլյացիաները հանդիպում են հիմնականում միջինը՝ ծովի մակարդակից 800-1500 մետր բարձր լեռնային շրջաններում: Աճում է չոր լանջերին՝ առաջացնելով բուսական փոքրախմբեր: Դրա անընդհատ կրճատվող արեալներից մնացել է միակ աճելավայրը՝ բուսականությունից աղքատ Ակունք, Զարինջա (ՀՀ Արագածոտնի մարզ) և Ջիթհանքով (ՀՀ Շիրակի մարզ) գյուղերի տարածքներն են՝ վարելահողերի միջանցքները, չմաշկված հողակտորները: Սակայն դրանց քանակը անընդհատ կրճատվում է:

Բազմամյա է, արմատապտուղը հողի մեջ խորը գնացող՝ 75-100սմ, որը կշռում է 3-4կգ: Ճյուղավորված է, շաքարի քանակը արմատապտղում մինչև 25% է: Ի տարբերություն մնացած բոլոր տեսակների՝ ծաղիկները չեն սերտաճում և կնձիկներում ձևավորվում են մեկական սերմեր: Ունի սելեկցիոն մեծ նշանակություն:

B.corolliflora Zoss. - *Ճակնդեղ* – Գլխավորապես հանդիպում է լավ մշակված, հարուստ հողերում, Հայաստանում ունի լայն տարածում՝ ՀՀ Կոտայքի մարզի Թեղենիս և ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղերի շրջակայքում, Սևանա լճի շրջանում, ՀՀ Կոտայքի մարզի անտառածածկ տարածքներում (Ծաղկունյաց լեռներ) Ֆանտանի, «Հադիս» լեռան, Ծովագյուղի (ՀՀ Գեղարքունիքի մարզ), Բյուրականի «Ամբերդ» ամրոցի, Ապարանի ջրամբարի մերձակա անտառների շրջակայքում (ՀՀ Արագածոտնի մարզ), Խոսրովի պետական արգելոցի տարածքում: Սրանք բազմամյա, ձմեռադիմացկուն բույսեր են, աճում են գլխավորապես խոնավ վայրերում, ծովի մակարդակից 2000-2700 մետր բարձրությունների վրա:

Բազմամյա է, արմատապտուղը խոշոր՝ 8-10կգ, մինչև 15սմ տրամագծով: Գլանաձև է, խորանում է հողի մեջ մինչև 1 մետր և ավելի:

Սրանք բոլորն էլ որպես ճակնդեղի վայրի ազգակիցներ ունեն որոշակի հետաքրքրություններ, ինչպես գիտական, այնպես էլ պրակտիկ տեսակետից, որպես սելեկցիոն ելանյութ ցրտադիմացկուն, չորադիմացկուն, աղադիմացկուն, միասերմ հատկանիշների շնորհիվ:

Մինչև այժմ էլ լեռնային այն մարզերում, որտեղ աճում են վայրի ճակնդեղի այս կամ այն տեսակները, մարդիկ վաղ զարնանը հավաքում են դրանց տերևները և խաշած, տապակած, ինչպես նաև այլ ձևերով (տերևակոթունները թթու դրած՝ ճավ) օգտագործում են սննդի մեջ:

Rumex L. Ավելուկ

Հայաստանում տարածված են ավելուկի 13 տեսակներ, սակայն սրանցից ժողովրդի կողմից հիմնական կիրառություն են գտել հետևյալ տեսակները (*R. acetosella* L. - *Ա. փոքր կամ թթվաշ /թթվաշիկ/, R. acetosa* L. - *Ա. սովորական թթու, R. crispus* L. - *Ա. գանգուր, R. alpinus* L. - *Ա. ալպիական, R. confertus* Willd - *Ա. ձիու*), որոնք բոլորն էլ հայտնի են ավելուկ ընդհանուր անվան տակ: Բոլոր տեսակներն էլ խոնավասեր են, հետևաբար և լայն տարածված ինչպես հանրապետության ցածրադիր /ծովի մակարդակից 500-800 մետր/, այնպես էլ բարձրադիր /ծովի մակարդակից 2200 մետր/ վայրերում, հատկապես անտառային գոտու հարավային շրջանում, Արարտյան հարթավայրում և նրա նախալեռնային գոտիներում:



Ավելուկի բույսերը բազմամյա են: Տերևները սկզբնական փուլում նուրբ են և ուտելի, սակայն հետագայում, երբ ձևավորվում է ծաղկացողունը, դրանք դառնում են կոպիտ և կաշվեկերպ:

Ավելուկն օգտագործվում է ինչպես թարմ վիճակում, այնպես էլ չորացրած, զանազան ճաշատեսակների մեջ:

Գարնան և ամռան առաջին կեսերին հավաքում են դալար, երիտասարդ, առողջ տերևները, մաքրում և թեթև թառամեցնելուց հետո հյուսում են և չորացնում՝ ձմռանը օգտագործելու համար: Ուտելուց առաջ ջրի մեջ մի քանի ժամ թրջում են և եփում մինչև փափկելը, որից հետո քամում և բուսական կամ կենդանական յուղի մեջ սոխով տապակում. ավելացնում աղ, օգտագործում սխտորով-մածոնով: Ավելուկի կալորիականությունը ավելի բարձր է, քան պոմիդորինը (245 կալ):

Արմատը պարունակում է 2-12% դաբաղանյութ, ձյութ, եթերային յուղեր և K₂ վիտամին:

Ավելուկը լավ դեղաբույս է, բժշկության մեջ օգտագործվում է թուրմի և եփուկի ձևով, հատկապես այն բույսերը, որոնք հարուստ են էմոդին և անտրախինոն նյութերով: Ուշ աշնանը հավաքած ավելուկի արմատները մանր կտրատում են և չորացնում, պահում են չոր տեղում:

Ավելուկի բուժիչ հատկությունների մասին տեղեկություններ կան նաև հայ բժշկապետերի աշխատություններում:

Falcaria Fabr. Սիբեխ



Հայաստանում սիբեխի ցեղին պատկանող 4 տեսակներից հայտնի են երկուսը՝ *F. vulgaris* Bernh. /*F. rivini* Host., *F. sioides* Wib. Aschers./ - *սիբեխ սովորական և F. falcaroides* /Bornm. et H. Wolff./ H/ Wolff. - *սիբեխ սիբեխանման*: Դրանցից առաջինն ունի մեծ կիրառություն սննդի մեջ և լայնորեն տարածված է Հայաստանի գրեթե բոլոր մարզերում, և ունի ֆենոլոգիական հատկանիշների մեծ բազմազանություն:

Սիբեխը երկամյա է, երբեմն նաև բազմամյա: Ինչպես դրա տերևային վարդակը, այնպես էլ երիտասարդ, նուրբ

ցողուններն օգտագործվում են սննդի մեջ, ունեն լայն կիրառություն ինչպես թարմ, այնպես էլ եփած, խաշած, չորացած, թթու դրած ձևերով:

Այն օգտագործում են սննդի մեջ բոլոր տեղաբնակները, երբեմն խառը, վայրի այլ բանջարեղենների հետ կամ առանձին: Նայած աճման վայրի և ծովի մակարդակից ունեցած բարձրության, խոնավության և այլ գործոնների, սիբեիը շատ վաղ է ձևավորվում (մարտ-ապրիլ ամիսներին) սննդի համար պիտանի 4-5 տերևից բաղկացած վարդակներ, ուստի այն գերվաղահաս տերևաբանջար է և մեծ հեռանկար ունի մշակության մեջ ներդնելու պատճառով:

Ամենից շուտ այն օգտագործման համար պիտանի է դառնում Արարատյան դաշտում, դրա նախալեռնային շրջաններում, իսկ այնուհետև լեռնային վայրերում: Այսպիսով իր վաղահասությամբ հանդերձ, սննդի մեջ այն կիրառվում է երկար ժամանակահատվածում:

Որպես արժեքավոր բանջարային բույս, սիբեիը պարունակում է 63մգ%С և 4,96մգ%A վիտամին: Անհաշվենկատ հավաքչարարության հետևանքով դրա տարածման արեալները անընդհատ կրճատվում են:

Cherophyllum L. Շուշանբանջար

Չնայած Հայաստանում աճում են շուշանբանջարի բազմաթիվ տեսակներ, սակայն դրանցից առավել տնտեսական նշանակություն ունեն և հետաքրքրություն են ներկայացնում *Ch.aureum L.* - **Շուշանբանջար ոսկեգույն** և *Ch.bulbosum L.* - **Շուշանբանջար պալարակիր, մանդակ, դմի կովկասյան** տեսակները: Սրանցից առաջինը միամյա, իսկ երկրորդը երկամյա բույս է: Դրանք հիմնականում տարածված են ցածրադիր և բարձրադիր գոտիներում, Արարատյան դաշտավայրի այգիներում, նախալեռնային գոտում, գետափերին, թփուտներում, մարգագետիններում՝ ընդգրկելով մինչև 2300 մետր բարձրություններ: Դեռ վաղ *bulbosum L.*- ը առաջին տարում ձևավորում է տերևային վարդակ, իսկ երկրորդ տարում արմատային հաստացումներ, (պալարներ) և հաստ ծաղկացողուններ: Դեռ վաղ ժամանակներից հայ մարդը շուշանբանջարն օգտագործել է սննդի մեջ, որպես արժեքավոր С և А վիտամիններով և հանքային աղերով հարուստ վաղ գարնանային բանջար: Սննդի մեջ օգտագործում են երկու տեսակների դալար ցողունները՝ թարմ, եփած, թթու դրած և պահածոյացված վիճակում, իսկ տերևային վարդակը խաշում են և յուղով տապակում:



Heracleum L. Բլդրդան



H.trachyloma Fisch. et C.A.Mey. - **Բլդրդան թավոտ** տեսակը վայրի ուտելի և շատ արժեքավոր բուսատեսակ է, որը հանդիպում է գլխավորապես լեռնային և նախալեռնային գոտում, համեմատաբար խոնավ կլիմայի պայմաններում: Սննդի մեջ օգտագործում են տերևակոթունները և երիտասարդ ցողունները, հիմնականում թթվեցման միջոցով: Հիմնական վտանգը վերացման առումով պայմանավորված է անհաշվենկատ հավաքչարարությամբ:



Malva L. Փիփերթ

Հայաստանում հանդիպում են փիփերթի 5 տեսակներ (*M.neglecta* Wall. - *Փ. արհամարհիված*, *M.sylvestris* - *Փ. անտառային*, *M.nicaeensis* All. - *Փ. Նիցցային*, *M.pusilla* - *M.parviflora* - *Փ. մանրածաղիկ*), չնայած բոլորն էլ լավ կերաբույսեր են, սակայն սրանցից գործնական ամենամեծ նշանակություն ունի միայն առաջինը, որն օգտագործվում է սննդի մեջ: Հանդիպում է ամենուրեք, ՀՀ գրեթե բոլոր մարզերում՝ ծովի մակարդակից 800-1870 մետր բարձրություններում, հատկապես Արարատյան հարթավայրում և նախալեռնային գոտում: Սննդի մեջ օգտագործում են փիփերթի (բազմամյա հասակում) կողային փոված ճյուղավորությունները սկսած ապրիլի վերջից, որոնք շատ սննդարար են և ունեն բուժիչ հատկություններ:

Cucumis L. Սեխ

Հայաստանն իրավամբ համարվում է սեխի (*C.melo* L. - *սեխ սովորական, ցանովի*) ծագումնաբանական կենտրոններից մեկը (դրա հյուսիսային սահմանը), որտեղ ակտիվորեն ընթացել են ձևառաջացման պրոցեսներ: Դրանով է բացատրվում նաև այստեղ առկա սեխի տեղական բազմաթիվ անկրկնելի սորտերն ու ձևերը, որոնք սակայն ոչնչացման վտանգի առաջ են կանգնած: Հայաստանում հայտնաբերված են նաև սեխի վայրի տարատեսակներ, որոնցից սակայն *var. agrestis* Naud. - *դաշտամուղախոտային սեխն* արդեն վերացել է, պահպանվել է միայն *var. microcarpus* - *մանրապտուղ սեխը*, որը ժողովրդի մեջ հայտնի է «Շամամ» անունով: Դրանք լինելով խիստ հոտավետ, օգտագործվում են դեկորատիվ նպատակներով, սակայն լինելով խիստ ճանճաղիմացկուն կարող են կիրառվել նաև սելեկցիայում: Այսօր ամենակարևոր խնդիրը մշակովի հնադավ սորտերի ու ձևերի, ինչպես նաև վայրի տարատեսակների պահպանումն է:



Պտղա - հատապտղային բույսեր

Հայաստանի տարածքը հարուստ է նաև պտղա-հատապտղային բուսատեսակների վայրի ազգակիցներով, որոնք կարևորում են ոչ միայն սննդի մեջ կիրառելու տեսանկյունից, այլև դրանցից շատերը մշակության մեջ ներդնելու, կամ սելեկցիոն նպատակներով օգտագործելու տեսակետից:

Այս տեսակետից առավել կարևորվում են հետևյալ բույսերի ներկայացուցիչները:

Malus Mill. Խնձորենի



Հայաստանում հայտնի են տեղական ծագման, հնադավ բազմաթիվ սորտեր, որոնք աստիճանաբար դուրս են մղվել արտադրությունից՝ իրենց տեղը զիջելով արտասահմանյան նոր սորտերին: Դրանք, ինչպես և Հայաստանի գրեթե բոլոր անտառներում հանդիպող վայրի խնձորենին՝ *M.orientalis Uglitzk.* - *խնձորենի արևելյան*, որը չափազանց պոլիմորֆ տեսակ է, կարիք ունի պահպանության:

Pyrus L. Տանձենի

Պտղատուներից ամենատարածվածն է Հայաստանի անտառներում, որտեղ դրանք հանդես են գալիս համատարած բուսություններով և կոչվում են <<տանձուտներ>>: Հայաստանում հայտնի են վայրի տանձենու բազմաթիվ տեսակներ և ձևեր (*P. browiczii Mulk.* - *S.Բրովիչիի*, *P.syriaca Boiss* - *S. սիրիական*, *P. takhtadzhanii* - *S. Թախտաջանի*, *Fed Pcomplexa Pudtzov* - *S. խառնված*, *P. elta Rubtzaov* - *S. բարձր*, *P. hajastana Mulk.* - *S. հայաստանյան*, *P. medvedevii* - *S. Մեդվեդևի*, *P. nutans Rubtzov.* - *S. կռացող*, *P. oxypirion Voronov.* - *S.սուր ատամնավոր*), որոնց տեսակային կազմի, ինչպես նաև մշակովի տանձենու (*P. communis. L.* - *S. սովորական*) բազմաթիվ տեղական ծագման հնադավ սորտերի պահպանությունը կարևոր խնդիր է: Անտառահատումների հետևանքով պակասում են հատկապես վայրի ձևերը, որոնց փայտը որակյալ հումք է կահույքագործության համար: Դրանք գնահատվում են որպես չորա և ցրտադիմացկուն, պայմանների նկատմամբ ոչ պահանջկոտ բույսեր, որոնք կարող են օգտագործվել հիբրիդացման նպատակով և որպես պատվաստակալներ: Առաջացնելով փարթամ և փոված արմատային համակարգ, կարող են օգտագործվել անտառատնկումների համար և խիստ դեկորատիվ են տարվա բոլոր ժամանակներին: Վայրի տանձի պտուղներն օգտագործվում են նաև տեղաբնիկների կողմից:



Sorbus L. Արնուենի

Հայաստանում աճում են արնուենու 13 տեսակ, որոնք բոլորն էլ աչքի են ընկնում իրենց մեծ



բազմազանությամբ (բազմաթիվ ձևերի առատությամբ): Դրանց պտուղները շատ հարուստ են վիտամիններով և միկրոէլեմենտներով, ուստի մեծ հետաքրքրություն են ներկայացնում բնակչության համար: Այստեղ առավել քան կարևոր են *արնուենու S. hajastann Gabr. - Ա.հայաստանյան, S. luristanica (Bornm) Schob Temesy - Ա. լուրիստանյան, T. takhtajanii Gabr. - Ա. Թախտաջյանի, S. subfusca (Lebed.) Boiss. - Ա. գորշ, S. persica Held. - Ա. ժպարսկական* տեսակները:

S. hajastann Gabr - Ա.հայաստանյան - տեսակը համարվում է նեղալոկալ էնդեմիկ: Այն հիմնականում հանդիպում է Սևանա լճի ավազանում, Արայի լեռան քարքարոտ լանջերին, անտառային վերին սահմանում, արոսենու այլ տեսակների (*S. luristanica, S. takhtajanii, S. subfusca*) հետ, 1600-2400 մետր բարձրություններում: Ունի անգնահատելի դեկորատիվ նշանակություն, իսկ խոշոր և քաղցր պտուղները, որոնք հարուստ են վիտամիններով, միկրոէլեմենտներով օգտագործվում են սննդի մեջ:

Crataegus L. Սգնի, ալոճ

Սգնին կամ ալոճենին տարածված են համարյա ամբողջ Հայաստանում: Հայտնի են 11 վայրի տեսակներ, որոնք բոլորն էլ շատ պոլիմորֆ են: Բացի դրանցից հայտնի են նաև խոշոր, համեղ և սննդարար պտուղներով բազմաթիվ կիսակուլտուրական ձևեր, որոնք պատկանում են *C. pontica K.Koch - Ա. Պոնտիկական* տեսակին: Հանդիպում են հիմնականում Խոսրովի պետական արգելոցում, Ուրցաձորում և այլն, չոր քարքարոտ լանջերին ներքին և միջին լեռնային գոտում՝ 800-1800 մետր բարձրություններում: Պտուղները խոշոր են, որոնք հասունանում են սեպտեմբերից: Դրանք բազմասերմ, հյութալի, մսալի և շատ համեղ են: Բույսերն աչքի են ընկնում բարձր ցրտադիմացկունությամբ և անպահանջկոտ միջավայրի նկատմամբ: Որպես պտղատու չորային գոտիներում մշակության մեջ ներդնելու մեծ հեռանկար և դեղագործական ու դեկորատիվ նշանակություն ունի, մեղրատու է:



Ficus L. Թզենի

Տարածված են *F. carica L. - թզենի մշակովի* տեսակին պատկանող ինչպես տեղական



սորտեր, այնպես էլ վայրի ձևեր: Հանդիպում է առանձնաբույսերի ձևով: Վերացման մեծ վտանգ կա, հողերի յուրացման, ինչպես նաև բիոտիկ և հողակլիմայական գործոնների փոփոխման հետևանքով: Հիմնականում հանդիպում են Իջևանում, Զանգեզուրում, հարավային քարքարոտ լանջերին, գետափներին, հիմնականում կրային

հողերում: Պտուղները շատ համեղ են, թփերը պիտանի դեկորատիվ կանաչապատման համար:

Armeniaca Mill Ծիրանենի



Հայաստանում ծիրանենին ունի շատ հին պատմություն, որով էլ բացատրվում է ժողովրդական սելեկցիայի այնքան տարատեսակ սորտերի և ձևերի առկաությունը: Դրանք բոլորը, ինչպես և շատ հաճախ հանդիպող վայրի բազմաթիվ ձևերը պատկանում են *A. vulgaris* L. - **ծիրանենի սովորական** տեսակին: Այդ բազմազանության պահպանումը կարևորագույն խնդիր է, քանի որ ծառահատումների հետևանքով անընդհատ պակասում են հատկապես վայրի ձևերի քանակը:

Amygdalus L. Նշենի

Հայաստանում նշենին հանդիպում է գլխավորապես խմբակային մացառուտների ձևով և աչքի է ընկնում իր անսովոր հարուստ ձևերով: *A. communis* L. - **նշենի սովորական** տեսակից բացի, որը չնայած մշակովի է, սակայն հանդիպում են նաև վայրի ձևեր, Հայաստանում կարելի է հաճախ հանդիպել նաև *A. nairica* Fed. Et Takht. - **Նշենի նաիրյան**, *A. urartu* Tammash. - **Նշենի ուրարտու**, *A. fenzliana* (Fritsch.) Lipsky - **Նշենի Ֆենցլիի** տեսակները: Սրանցից հատկապես վերջինս շատ պոլիմորֆ է և ունի մորֆոլոգիական տարբերվող բազմաթիվ ձևեր: Սրանց պտուղները շատ դառնահամ են և սննդի մեջ համարյա չեն օգտագործվում, սակայն ունեն սելեկցիոն նշանակություն և խիստ կարևոր է դրանց պահպանման կազմակերպումը:



Prunus Mill. Սալորենի

Հայաստանում հանդիպում են հիմնականում սալորենու 4 տեսակ, սակայն դրանցից առավել ձևաբանական տարբերություններով է օժտված *P. divaricata* Lebed. - **շլորենի, ալուշա** տեսակը: *Diospyros* L. **Խուրմա**
D. lotus L. - **խուրմա կովկասյան** տեսակին պատկանող վայրի բույսեր Հայաստանում



արտակարգ հազվադեպ են հանդիպում: Հայտնի են ընդամենը 2-3 անհետացող պոպուլյացիաներ, հիմնականում Հրազդանի կիրճում, իսկ հիմնական տարածման արեալը ընդգրկում է Իջևանի, Մեղրու տարածաշրջանը և Երևանի շրջակայքը: Հիմնականում հանդիպում է առանձնաբույսերի ձևով, հազվադեպ խմբերով: Պտուղները հասունանում են ուշ և օգտագործում են սննդի մեջ: Հետաքրքրություն է ներկայացնում սելեկցիայի

համար:

Rubus L. Մոշենի, մոռենի



Հայաստանում այս ցեղին պատկանող բազմաթիվ տեսակներ կան: Դրանք բոլորն էլ աչքի են ընկնում մեծ պոլիմորֆիզով: Ամենատարածվածներն են՝ *R.caesius L.* - *մոշենի կապտավուն*, *R. anatolicus Focke* - *մոշենի անատոլիական*, *R. armeniacus Focke* - *մոշենի հայկական*, *R. idaeus L.* - *մորենի, ազնվամորի* տեսակները: Դրանցից առաջինը հանդիպում է 2000 մետր բարձրություններում, իսկ վերջինը հիմնականում հանդիպում է Լոռիում, Իջևանում, Արագածում, Սևանում, Ախուրյանում: Դրանք բոլորն էլ ունեն տնտեսական նշանակություն և օգտագործվում են սննդի մեջ:

Juglans L. Ընկուզենի

Հայաստանում ընկուզենին (*J.regia L.* - *Ը. սովորական*) հայտնի է իր բազմաթիվ ձևերով, որոնց մեծ մասը հանդես է գալիս վայրի ձևով: Դրանք տարածված են գրեթե ամբողջ Հայաստանում և հատկապես Զանգեզուրում, որտեղ միայն նկարագրված են 11 ձևեր: Տեսակը հայտնի է իր սննդարար պտուղների և խիստ որակյալ բնափայտի համար: Մակայն անհաշվենկատ ծառահատումների պատճառով (փայտանյութի համար) սրանց քանակը տարեցտարի կրճատվում է, ուստի կարևոր է դրանց պահպանության կազմակերպումը:



Գերմալազմա - գենետիկական նյութ՝ նշանակում է ժառանգականության գործառնական միավորներ պարունակող բուսական, կենդանական, մանրէաբանական կամ այլ ծագում ունեցող ցանկացած նյութ:

Լանդրասներ կամ վաղնջական պարզունակ սորտեր - ավանդական սորտեր, որոնք ստեղծվել են և անընդմեջ բազմացվում են ագարակապանների կողմից և հարմարեցված են տեղի շրջակա միջավայրի պայմաններին:

Կենսախորշ - աճի և զարգացման այն խորշը, որը զբաղեցնում է տվյալ տեսակը բույսերի համակարգում:

Կենսաբազմազանություն - նշանակում է կենդանի օրգանիզմների տարատեսակությունը բոլոր աղբյուրներից՝ ներառելով մասնավորապես ցամաքային, ծովային և այլ ջրային էկոհամակարգերն ու էկոլոգիական համալիրները, որոնց մասն են դրանք հանդիսանում. այս հասկացությունն ընդգրկում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը:

Կրիոպահպանում - գերպլազմայի պահպանումը ցածր և գերցածր ջերմաստիճանի պայմաններում:

Մուտացիա - օրգանիզմի հատկանիշների ժառանգական փոփոխություններ գենետիկական նյութի փոփոխման արդյունքում:

Պոպուլյացիա - նույն տեսակին պատկանող բույսերի խմբաքանակ, որոք աճում են նույն աշխարհագրական տարածքում:

<<in-situ>> - պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող բազմազանության պահպանումը, նրանց բնական զարգացման տարածքում, որտեղ այդ բազմազանությունը ծագել է և շարունակում է զարգանալ ու այդ բազմազանության անմիջական օգտագործումը գյուղատնտեսության մեջ կամ օգտագործումը որպես գների աղբյուր:

<<in-situ>> - **<<on farm>>** - ագարակների պայմաններում (on farm) գյուղատնտեսական բույսերի ավանդական սորտերի գենետիկական բազմազանության կայուն կառավարումը ագարակատերերի կողմից այդ սորտերի ստեղծման տեղում, նրանց հետ առնչվող վայրի և մոլախոտային տեսակների կամ տարբերակների հետ համատեղ, ավանդական գյուղատնտեսական, այգեգործական կամ ագրոանտառքուծական համակարգերում:

<<ex-situ>> - գերպլազմայի տեղափոխությունը իր աճման տեղանքից և պահպանումը այդ տարածքից դուրս գենբանկում սերմերի ձևով, վեգետատիվ նյութի ձևով (in vitro) պահպանման դեպքում կամ սորտանմուշի ձևով, որոնք աճում են բուսաբանական այգիներում կամ դաշտային գենբանկներում:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինիթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):